


Մ Ի Օ Ս

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՐԳԵՅԻՆ, ԲԵՆԵՍԻՐԸԿԸՆ, ԳՐԸԳԻՏԸԿԸՆ
ԵՒ ԲԸՂԸԲԸԿԸՆ



ՎԵՑԵ ԲՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԸՄԵԸՅ



ՅԵՐՈՒՍԱԸՂԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1871



ՎԵՅԵՐՈՂԻ ՏՄԻԻ
ԹԻ 7.

Մ Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԻՍ 31.
1871.

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Բ. Ա. Ն. Ա. Ս. Ի. Ր. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Ր. Ա. Գ. Ի. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Ա. Ա. Բ. Ե. Լ. Ա. Պ. Ա. Շ. Տ. ՕՆ Ս. Հ. Ա. Յ. Ր. Ա. Պ. Ե. Տ. Ե. Ի. Գ. Ե. Ր. Ա. Պ. Ա. Տ. Ի. Ի. Ս. Հ. Ա. Ր. Բ.

« Յիշեցեք ջառաջնորդս ձեր որք խօսեցան ձեզ ջրանն Աստուծոյ, հայեցեալք յեշս գնացից նոցա՝ նմանոցք եղբուք հաւատոցն » • ԵՐԻ • ԺԳ • 7.

ԲՈՒՌՆ ղգացում մի է, որ երկ-
չոտ ու պատկառող բնութեանս հա-
կառակ կը բռնագատէ զիս այսօր բար-
ձրանալ բանախօսութեան բեմիս վը-
րայ և ՚ի ներկայութեան ակնածելի
ակմբիս երկու խօսք ընել: Այս ըզ-
գացումը նուիրական է, ուստի ինձ
համար անդիմադրելի երեւցաւ, ո-
րով մուսայայ իմ բարբ Թերութիւն-
ներս և համարձակութիւն առ ի յա-

ւետ Չեր ներողամտութեան ապա-
ւինելով քան թէ իմ յաջողակութեան,
զոր չունինալս քաջ գիտեմ: Արեմն
այս իմ պակասութիւնս թող լեցնէ
իմ ղգացմանս սրբութիւնը, որ երախ-
տագիտական է, և զոր կը ղգամ ան-
մահ բարերարաց վսեմ յիշատակին
համար, և թող քաջալերէ զիս Չեր
յօժարակամ ունկնդրութիւնը, զոր
ինձ համար վեհանձնական շնորհք մի
կը համարիմ:

Ամազրոյս նախորդ թուով խօստացած էինք
հրատարակել սոյն ճառը, որ խօսուած է ժա-
ռանգաւորաց վարժարանի պարգեւաբաշխութեան
օրը, և ահա՛ ասիկ կը կատարենք մեր խօստմանն.
ԲԵ. Ժ. Ի.

Արդ էն մեր գիտակցութիւնը կ'ու-
սուցանէ մեզ և մեր խիղճը կը բռնա-
դատէ որ մեզ օգտակար եղող ան-
ձանց բարեօք փոխադրինութիւն ընենք,

վասն զի այս բնական պարտաւորութիւն մ' է : Բայց որովհետեւ կը գտնուին մարդիկ , որ ընդդէմ գիտակցութեան , ընդդէմ խղճի և հակառակ բնական պարտաւորութեան կը համարձակին մուսնալ իրենց այս նուիրական պարտքը , և որովհետեւ գտնուած են ու կը գտնուին այնպիսի մարդկային հրէշներ , որ այլանդակ անձնատիրութեամբ չեն ուզեր ուրիշէն ընդունած բարիքնին ճանչնալ , որք ոչ միայն լոկ ճանաչողութեամբ չեն յարգեր , այլ և չարեօք և ատելութեամբ ալ կը փոխարինեն , ոչ միայն 'ի բարին չեն յիշեր , այլ և նախանձու կրիւք վարակեալ կը զըստատեն և կը բամբասեն , որով կը վշտանան բարեսէր սրտերը եւ գրեթէ կը սպառի մարդկան սրտին մէջէն բարեսիրութեան գեղեցիկ զգացումը . ուստի 'մարդկան ազգի բարութեան և առաքինութեանց թշնամի այս ապաշտորհ հրէշներն ուղղելու համար Աստուած սրբագործեց այս բնական պարտաւորութիւնը յատուկ պատուիրելով թէ « Օրատիտի բարերարաց մի մուսնայք . » նոյնպէս և ահա Պողոս Ս . Առաքեալը , որ Բերիտոսի բերնով կը խօսէր , մասնաւորապէս կը պատուիրէ մեզ յիշել մեր առաջնորդները , իբր երախտաւորներ , և որպէս զի որ և իցէ առաջնորդ չի հասկընանք , կը մասնաւորէ և կը յատկացնէ ըսելով . « Արք խօսեցան Չեղ զբանն Աստուծոյ . » այս ալ բաւական չխտեպելով կը սորվեցրնէ նաև թէ զանոնք յիշելով ինչ պէտք է շահինք . ուստի կ'աւելցնէ , « Հայեցեալք յերս գնացից նոցա նմանողք եղերուք հաւատոցն : »

Բերիտոսի սուրբ Ալկեղեցին ալ այս պատուէրին համեմատ առաքինի և աստուածահաճոյ անձանց յիշատա

կութեան օրեր սահմանած է , նպատակ ունենալով հաւատացելոց հոգեւոր օգուտը , ուր պարտաւոր ենք յիշել նոցա վարքը և անոնց առաքինութեանց նմանող լինել . բայց ասի սոս , որ ժամանակ անցնելով ինչպէս շատ օգտակար կարգադրութիւններ , նոյնպէս և այս գովելի և հարկաւոր կարգադրութիւն իւր բուն նպատակէն շեղած և լոկ սովորական արարողութիւն է դարձած . վասն զի , իրաւ է որ հաւատարմութեամբ կը կատարենք Ալկեղեցւոյ սոյն ամենապիտանի աւանդութիւնը , բայց բնաւ անկէ հոգեւոր օգուտ մը քաղել չենք գիտեր : Ամեն ատեն կը տօնենք շատ սրբոց անուններ , առանց իսկ ճշդիւ անոնց գործերը գիտնալու և անոնց առաքինութեան նմանիլ ջանալու : Այսօր ալ Հայաստանեայց սուրբ Ալկեղեցին ըստ սովորութեան կատարեց երկու անգու գալիսն բարերարաց տօնը , իսկ մանկունք եկեղեցւոյ մասնաւոր հանդիսիւ կ'ուզեն փառաւորել իրենց բարերար առաջնորդաց քաղցր յիշատակը : Այս երկու ճրջ մարիտ առաջնորդներն են սուրբն Սահակ և Մեսրոպը , որք երկու լուսապայծառ ջահեր են միշտ սուրբ Ալկեղեցւոյ մէջ և Հայ ազգի մտաւոր պայծառութեան համար մշտաւառ արեգակունք : Բայց եթէ ճրջ մարիտը խօսել հարկ է , ցաւօք սրտի կ'ըսենք , որ տակաւին սոքա իրենց բուն արժանեաց համեմատ նշանակութիւն չեն ստացած , ոչ Ալկեղեցւոյ և ոչ Ազգային հանդէսներու մէջ , մինչդեռ խումբ մի անձանօթ անուններ առաւել նշանաւոր կերպիւ կը տօնուին , այլ սոքա նշանաւոր են մեզ համար ըստ ամենայնի , տակայն խիստ անյայտ կերպիւ կ'անցնի իրենց յիշատակը և ալքը չիճանչնար իւր բաւ

րերսրքը . առաջնորդ են մեզ սրբա ի-
րենց լուսաւոր վարդապետութիւն ու
առաքինի գործքերովը . ուստի պար-
տաւոր ենք այսօր հանդիսաւոր յիշա-
տակաւ պատուել զանոնք և համա-
ռօտակի նոցա կեանքը քննելով նմա-
նող լինել իրենց աստուածահաճոյ
գործոց :

Հայաստան աշխարհը կը տագնաւ
պէր խռովութեանց և անկարգու-
թեանց մէջ , և իւր երկրորդ հարստու-
թեան , Արշակունեան գահուն կոր-
ծանու մը մօտեցած էր : Մտանի թըշ-
նամիներ մէկ կողմէն , արտաքին բռ-
նաւորներ միւս կողմէն , Հայոց ծու-
ծը ցամբեցնելու և արիւնը քամելու
կը ճգնէին : Յունաց նենգութիւնը
և Պարսից բռնութիւնը շատ մը ներ-
քին խռովութիւններու և երկպա-
ռակութիւններու պատճառ տարով՝
ազգը պետանջ ծովու նման կը տա-
տանէր : Այնուազ անկայուն վիճակի
մէջ էր նաեւ ազգի մտաւոր ու բա-
րոյական վիճակն սլ . վասն զի ազգա-
յին լեզուին յատկութեան համեմատ
նշանագիր չունենալով , Պարսից Ա-
սորոց և Յունաց գրերը կը գործա-
ծէին , որք չէին կարող պէտք եղածին
պէս մեր ճօխ հնչմանց ձայներուն յար-
մարել : Կիեղեցոյ մէջ Սուրբ Պիլքը
օտար լեզուաւ կը կարդացուէր , զոր
ժողովուրդը չհասկնալով չէր կարող
օգուտ քաղել , որով օր աւուր հաւա-
տոյ ջերմութիւնը կը սառէր , բար-
քերը կ'ապականէին , մինչեւ անգամ
ազգայնութիւնը կործանման վիճակի
մէջ կը գտնուէր :

Ահա այսպիսի վտանգաւոր ժամա-
նակի մէջ տիեզերաց վրայ հակող՝ Աւ
խախնամութիւն ՚ի գութ շարժեցաւ և
խրկեց մեզ սուրբ Վրիգորի սերուն-
դէն մնացող վերջին շառաւիղ Պահլա-
ւունի համբաւոր Սուրէնայ տոհմէն

սուրբն Սահակ սրարթեւը , որ իւր
սրտաքին բարեվայելուչ կազմութե-
ն և դիմաց պայծառութեան ու վա-
մութեան հետ՝ կատարեալ էր նաև
հոգւոյ ազնուութեամբ : Սա իւր
սուրբ Ատինեսոց բոլոր պանծալի ա-
ռաքինութեամբք զարգարուած , ահ
նածելի և պատկառելի էր ամենուն ,
ոչ միայն իւր ազգին , այլ և օտարաց
և բարբարոսաց անգամ . . . արդարև
սուրբն Սահակ , իւր հոյակապ նախ-
նեսոց լաւութեանց բոլոր հանգա-
մանքներն իւր անձին վրայ եւ բո-
լոր կենացը մէջ փայլեցուցած լինե-
լով , արժանապէս կոչեցաւ ՚ի բարձր
պատիւ ծայրագոյն քահանայապե-
տութեան , որով իւր առաքինու-
թեանց ընդարձակ ասպարէզ բաց-
ուելով , սկսաւ իւր իմաստուն կա-
ռավարութեամբը , ազդու խօսքերովը
և անարատ վարուքը շատ բարեկար-
գութիւններ հաստատել , և ամենուն
հայելի ու բարի վարուց օրինակ հան-
դիտանալ : Իւր Հարց հարազատ որ-
դին և նոցա նախանձելի բարեմտ-
նութեանց ճշգրիտ նմանող լինելով՝
իրաւամբ ժառանգեց նոցա փառքն
ու սրտիւր . իմաստուն ճարտարս-
պետ եղաւ մեր ազգի համար . վասն
զի ազգայնութեան խարխուլ չէնքը
հաստատուն հիման վրայ կանգնեց .
ուրեմն յաւերժ յիշատակաց արժանի
առաջնորդ մի է սա . ուրեմն նորա
հետոցը կարող ենք աներկիւղ հետե-
ւելու , վասն զի զմեզ յանմահութիւն
առաջնորդելու համար հմուտ է եր-
կնից ճանապարհին , հմուտ է նաեւ
երկրի վտանգաց : Իսկ սուրբն Սե-
րովը , առաքինի ծնողաց զաւակ , հա-
ւատոյ և քաղաքականութեան իմաս-
տից մէջ քաջավարժ , ուշիմ և հան-
ճարեղ լինելով , նախ մեծին Վերտի-
սի ժամանակ հայրապետական վեհա-

րանի մէջ նստարու թեան պաշտօն վա-
րեց և համբաւն հռչակեցաւ , յե-
տոյ երանելոյն վախճանելէն զինի՛
մեր Առաւան անուն հաղարարեալին
խնդրանօք և թախանձալիր աղաչանօք
յանձն առաւ Հայոց թագաւորաց
գիւանադարու թեան պաշտօնը , ուր
սուրբ և հաւատարիմ կենօք , հանձա-
րեղ մտօքն ու լեզուագիտու թեամբը
ակնածելի եղաւ ամենուն եւ շատ
փառք ու պատիւ ստացաւ :

Բայց որովհետեւ նորա հոգին կը
ճանաչէր ճշմարիտ կեանքն ու անեղ
ճանելի փառաց յարգը , նորա միտքը
լուսաւորուած էր ճշմարիտ լուսա-
ւորութեամբ , վասն որոյ արդէն առ-
ուչինչ կը համարէր իրեն տրուած պա-
տիւները , և կարծես այն ամենը իւր
մաքրասուն հոգւոյն տաղակաւ թիւն
կը պատճառէին , ուստի ճանձրացած
կենցաղոյս սնտի հոգերէն , Յիսուսի
քաղցր լուծն ընտրելով առանձնացաւ
և աշակերտներ ժողովելով կ'ուսու-
ցանէր նոցա՝ աստուածային օրէնք-
ներն ու յաւիտենական իմաստու-
թիւնը : Այս նոր վիճակը մեծ ազ-
դեցութիւն ըրաւ իւր վրայ , վասն զի
փորձով տեսաւ որ օտար տառեր գոր-
ծածելով դրականութիւնը ամուլ կը
մնար կամ խիստ դանդաղ և դժուա-
րաւ կը յառաջանար : Այս մտային
քայլերու հաշմութիւնը տեսաւ Սեւ-
րովբ և սաստիկ զնոցաւ . ուստի այս
սոսանձնութեան մէջ մեծամեծ գոր-
ծեր արտադրելու համար վսեմ խոր-
հուրդներ յղացաւ , իւր անբիծ հո-
գին աշխարհային զբաղումներէ թե-
թեւցած՝ կը թեւազրէ իրեն , որ ազգին
հիմնական պիտոյքն հոգայ և անոր
հաստատուն բարիք մատակարարէ ,
նշանադիր հնարելով : Աւ սրդարեւ
սուրբ Սեւրովբայ պէս բանիբուծ անձ
մի այսպիսի մեծ և փառաւոր գործ

մի կատարելու արժանի էր , վասն զի
խորենացելոյն ըսածին պէս՝ « Իւր ժա-
ր մանակի բոլոր առարկին ներէն աւելի
ո գերազանց էր . ամբարտաւանութիւն
ո ու մարդահաճութիւնը նորա վա-
րուց մէջ չըկրցին մտնել , այլ ընդ-
ո հակառակն հեղ , բարեխորհուրդ և
ո բարեացակամ էր , երկնայնոց բնու-
ո թեամբ զարդարուած կը փայլէր ,
ո բանցի հրեշտակի նման կերպարանք
ո ունէր , մտօք բեղմնաւոր , բանիւք
ո պայծառ և գործով ժուժկալ էր ,
ո մարմնով խիստ վայելչազիր , խոր-
ո հրդակցութեամբ մեծ , հաւատարմ
ո ուղիղ , յուսով համբերող , սիրով
ո անկեղծ և անձանձրոյթ ուսուցիչ
ո էր » :

Ս. Սեւրովբայ այսչափ փառաւոր
և գովելի բարեմասնութեամբ զար-
դարուած լինելը՝ այնպիսի հաւատա-
րիմ ճշմարտաւէր անձէ մը վկայուե-
լով ամեն տարակոյս կը փարատէ . մա-
նաւանդ եթէ սոոյգ է որ պատճա-
ռին որպիսութիւնը գործէն կը ճանչ-
ցուի , ահա նոյն աղետամիտ , առա-
քինի և հանձարեղ ձերսենին , այս
վկայութիւնը տուող Սովսէս խորե-
նացին , Սեւրովբայ բաղմաթիւ աշա-
կերտներէն մին է : Արդ ահա յայտ-
նապէս տեսանք որ Սահակ և Սեւ-
րովբ ճշմարիտ և արժանաւոր առաջ
նորդներ են մեզ : Աւ սիլ է որ այս
պիսի բանիւ և արդեամբք վկայուած
իմաստուն և բարեսէր առաջնորդաց
նմանիլ չուղէ , որոց առաջնորդած
ուղին ըստ ամենայնի ապահով է :
Բայց մենք բիչ մ' ալ խօսքերնիս յա-
ռաջ տանինք :

Սահակ և Սեւրովբ երկնաւոր
վարդապետին ճշմարիտ աշակերտք ,
անձնադիր և քաջ հովուին անխէպ
նմանող , իրենց անձանց վտանգովը
ազգին վրիւթելը կը հոգան : Վասն

ղև Սահակ պարսկային գաղանին, Շապուհ բռնակալին, ժանեաց կը մատնուի. այլ իբր նոր Գանիէլ կը փրկուի գիշատիչ առիւծներու մահատու ճիրաններէն, և իւր առաջարկութիւն ընդունելով փառօք կը դառնայ իւր հայրապետական աթոռը:

Իսկ Սեորուլը լսելով Սահակայ հայրապետական աթոռ նստիլը, ուրախութեամբ լեցուած կուգայ նորամօտ և սիրտն անհանգիստ ընող խորհուրդը կը յայտնէ, հայերէն գիր չըլլալուն ախուր հետեւանքը կը բացատրէ և գիր հնարելու առաջարկութիւն կ'ընէ, և ահա սուրբ Հայրապետը իւր խորհրդոց համակիր և քաջալեր տեսնելով երկնային բերկրութեամբ կը լեցուի, իբրեւ պողպատ և կայծքար իրար կ'ընդհարին և մթութեան մէջ լոյս կը ցորցընեն, համակամ խորհրդակցութիւնը կամ բարի խորհրդոց միացումը փրկութիւն և կեանք կուտայ:

Այս առ թիւ չմունանք նաեւ յիշել Սուահայուն հանուամիտ եւ ուսումնասէր թագաւորը, որ բանիւ և արդեամբ ձեռնտու եղաւ սրբոց մեծ և կարեւոր խորհրդոյն:

Յետ այսորիկ սուրբն Սեորուլը վարդապետական բարձր պաշտօնն ընդունելով եւ սուրբ Հայրապետին հետ եռանդեամբ աղօթելով վերբարտին առանձնացաւ և անտանելի աշխատութեամբ սկսաւ ղեաղիլ:

Սուրբն Սահակ իմաստուն և պերճաբան վարդապետութեամբ ժողովրդեան վարքը ուղղելու և սրտերը սրբելու կ'աշխատի, եկեղեցւոյ մանկանց սիրտն ու մտքը դալիք փրկութիւնն ընդունելու կը պատրաստէ, իբր նոր կարապետ ձայն բարբառոյ յանապատի կը տեսնուի Հայաստանի մէջ:

Իսկ սուրբն Սեորուլը գիշեր և ցորեկ ճգնութեամբ, սահօք և աղօթիւք կ'աշխատի գրեր ստեղծել, և տեսնելով որ միայնակ ՚ի գլուխ հանել անհնար կը լինի, խոնարհ հոգևով և խոհեմ դատողութեամբ իմասանոց խորհրդոյն կը դիմէ, ծով ու ցամաք անցնելով անպայման վտանգներու դէմ կը մաքառի: Սիջադեսք, Ասորիք, Բիւզանդիան իւր սովորական ճանապարհները կը լինին, աղգին փրկութեանը ծարաւած աստ և անդ կը դիմէ աներկիւղ, ոչ տօթէն կը վախնայ և ոչ ցուրտէն, ոչ աւազակներէ և ոչ որ և իցէ պատահարէ, վասն զի երեք անընկճելի զէպքեր և ամենաբոյժ դեղեր իւր հետն ունէր, այսինքն հաւատոյ անխորտակելի վահանը, յուսոյ անդրդուելի խաբիսը և սիրոյ կենդանացուցիչ ջերմութիւնը. սեր թողունք հապա աւտուածեղէն տառից իմաստութեան բոլոր սպառազինութիւնները, որովք զտահաւորուած աղգին փրկութեան համար վտանգներու դէմ շահատակիլ կը փութայ:

Այս ամեն դժուարութեանց սերով կը համբերէ և արիաբար կը տուկայ, կ'անցնի փուշերուն և քարերուն վրայէն, իբր անուշահոտ ծաղկանց վրայէն, սակայն բոլոր ճիգը ապարգիւն կը լինի. քանզի մարդկային բոլոր հնարքը կը տկարանան եւ իւր բաղձանքն ապարդիւն կը մնայ, թերեւս Նախաինամութեանէն այսպէս տնօրինուած էր, որպէս զի ինքն ըլլայ այս փառաց ժառանգ ՚ի վարձ իւր վսեմ առաքինութեանց:

Ուստի մարդիկներէն ակնկալութիւն չմտալով կը դիմէ վերստին աւտուածային շնորհաց օգնութեան, և Աստուած, որ մարդկան որտի ուղղութեան և անխոյժ ջանասիրութեան

նայելով բնաւ անխորձ չի թողուր , (մանաւանդ երբ ալ մարդկային կարողութիւնը կը տկարանայ , իսկոյն կը զրկէ իւր մեծ զօրութիւնը և կը պըտակէ բարի աշխատութիւնը) օգնութեան հասաւ ահա և սրբոյն Սեւրովբայ , վասն զի մինչդեռ երանելին , իւր բորբոքեալ խորհրդոց մէջ հրդեհուեալ՝ քիչ էր մնացեր սր սոջորի և սպառի , մինչդեռ այս եռանդով վառուած աղօթքի մէջ էր , յանկարծ լուսոյ զմայելի ճառառայթներ կը սփռին իւր չորս կողմը , Ալ ինչ զարմանք , անպատում հրճուանօք լեցուած կը դիտէ և ահա աջ ձեռք մի կը տեսնէ , որ վիմի վրայ կը գծէր այն տառերը որուն կը տենչար իւր հոգին , բայց առաւել զարմանալին այն է , որ այս սքանչելի տեսլեամբ , թէ տառերուն ձեւերը , թէ հնչմունքը և թէ փաղառութեան հանգամանքները այնպէս կը տպաւորուին սրտին վրայ , որ կարծես թէ տարիներով վարժած և ունակացած էր : Տերմուանդն սիրով և երախտագիտութեամբ շնորհակալ կը լինի Տիրոջմէն , և այսպէս ընդունելով երկնսպարգև տառերը կը փութայ երանելին շուտով սովորեցնել իւր հետ գանուող ուշիմ աշակերտաց և կը սկսին գրքեր թարգմանել , քանզի սաստիկ ձմեռն լինելուն չէին կարող անմիջապէս Հայաստան դառնալ :

Իսկ ժամանակն հասնելուն պէս աճապարանօք կ'ուղևորի գէպ 'ի Հայաստան տանել իւր նորագիւտ գանձը և ամբարել Հայ մանկուոյն մը տաց հաւատարիմ գանձարանին մէջ :

Ահա կուգայ Սեւրովբայ իւր հետն ունենալով երկնատուր գրքերը և նոյն գրքերով թարգմանուած նոր կտակարանը , և ուրիշ գրքեր : Օ՛ն ուրեմն , ելէք ընդառաջ զաւակունք Հայաստանի , որչունցէք ձեր լոյսը , գրիկեցէք ձեր կեանքը և սիրով ընդունեցէք ձեր բարոյական փրկութիւնը :

Հասաւ Սեւրովբայ գալտեան լուրը Հայաստան . սուրբն Սահակ և արքայն Վրամչապուհ լսելով գըրոց գիւտը , անպատում սերախութեամբ կը լեցունին , կը մտնէ սուրբն Սեւրովբայ Հայաստան , և փառօք ու պատուով կ'ընդունուի . կը բացուին այնուհետեւ բազմաթիւ դպրոցներ և առատապէս կը վայելէ Հայ մանկուտին իւր մայրենի լեզուին քաղցրութիւնը և հոգի կ'առնու Սուրբ Վրոց ընթերցմամբը :

Նորգեօք արժան է յիշել այս տեղ Յունաց նենգամիտ չարութիւնը , որ չթողին և երկար ժամանակ արգելք եղան երանելեաց : Յոյնք ազգակործան խորհրդով չէին թողուր որ իրենց իշխանութե տակ եղող Հայերուն սովորեցնեն իրենց սեպհական գրքերը . բայց ինչ հարկ կայ յիշել նոցա այս եղբայրատեաց գործը և յուղել ազգասէր սրտերը , քանի որ այն արիասիրտ արթուն հովիւները , անվհատ և ժրաջան մը շակք այգւոյն Արեւելոց սուրբն Սահակ և Սեւրովբայ Վանիւք , թախանձանօք և խոհական միջոցներով յաջողեցան իմաստութեամբ յուղթանակել նենգութեան և այն տեղ ալ ծաւալեցին Հայ գրականութիւնը :

Թողունք այս ամենը և տեսնելք թէ ո՛ւր կը սլանայ Հայաստանի հըրեշտակը , իւր հոգւոյն թեթեւ թեւերուն վրայ առած լոյսն ու կեանքը՝ ո՛ւր կը դիմէ արգեօք : Օարմանալի հակապատկեր են Յոյնք և Սեւրովբայ , Յոյնք մեր գրքերը մեզնէ կ'արգիլեն , բայց ահա Սեւրովբայ կը փութայ Վրաստան և Աղուանից աշխարհը , նոցա լեզուին հանգամանաց համե

մատ նշանագրերը կը ստեղծէ, կ'ուսուցանէ և կը կրթէ: Այն վայրենամիտ Աղուանից ազգը աննկարագրելի արագութեամբ կը փոխուի, ուսմամբ և կրթութեամբ կը զարգանայ, կարճ խօսքով, ըստ Առաքելոյն՝ «Ամեն կողմ կը վազէ Սեբուլը, և մեն տեղ կը հասնի Քրիստոսի Աւետարտնաւ, և ամեն դռներ կը բացուին Տերամբ իւր առջեւ, Աստուծոյ գլուխութեան անուշահոտութիւնը ամեն տեղ կը ծաւալէր» . Բ. կր. Բ. 12-14: Երկուրորդը իւր լեզուով կը լսէր Կեղեցւոյ պաշտամունքը և կը սովորէր Սուրբ Գիրքը, անխոնջ աշխատութեամբ և աննախանձ մատակարարութեամբ սրբոյն Սեբուլայ: Չեղ կը թողում հիմա Սեբուլայ և Յունաց մէջ ուղիղ համեմատութիւն ընելը:

Հայաստան աշխարհի նոր Սովսէսներ եղան Սահակ և Սեբուլը, որ ժողովուրդը տգիտութե և բռնութեան Փարաւոնի ձեռքէն ազատելով առաջնորդեցին ճշմարիտ ազատութեան և աստուածային իմաստութեան Աւետեաց երկիրը, ձեղքեցին, պատառեցին նախանձու և բռնութեան ծովերը և անվնաս անցուցին Հայ մանկախն յայն կողմն ապահովութեան, և թողին, որ ազգային ազատ գրականութեան մէջ աներկիւղ ձեմեն: Սովսէս ապառաժը պատուեց և ջուր հանեց, և սոքա ապառաժէն աւելի կարծր քարացեալ սրտերը կակղացուցին, յորոց սխաւբղիսիլ աստուածային իմաստութեան կենդանարար ջուրը:

Արգարեւ՝ յաւերժական յիշատակաց արժանի են Սահակ և Սեբուլը, ոչ միայն իրենց վսեմ առաքինութեց, վարուց սրբութեան և գովելի աշխատութեան համար, որով երկուքն

ալ երկնային տեսլան արժանացան այլ և նոյն իսկ իրենց գերազանց և անհամամատ արդեանց համար, որով մինչ ցարդ անմահ մնացին և ցյաւխտեան պիտի մնան. վասն զի ահա կը տեսնանք, որ նոքա միշտ մեզ հետ կը խօսին և Աստուծոյ խօսքը մեզ կ'աւանդեն, թէ իրենց այլ և այլ գլուխածքներովն ու հոգեբուղի ճառերով Աստուծոյ կամբը մեզ կ'ուսուցանեն, և թէ իրենց արդեամբը՝ Սարգարէք և Առաքեալք հայերէն կը խօսին մեզ հետ: Ահա նոյն ինքն ամենաբարին Աստուած կը հաճի իւր կամբը հայերէն գրով և հայերէն լեզուաւ յայտնել մեզ: Աստուածաշունչ Սուրբ Գիրքը հին և նոր կտակարանը հայերէն կը կարդանք, և որոն պարտական եմք այս շնորհքը, եթէ ոչ սրբոյն Սահակայ և Սեբուլայ:

Իայց ինչո՞ւ կ'երկարեմ խօսքս, մի թէ նոքա հռչակուելու համար իմ տկար լեզուիս կը կարօտին. մի թէ իմ ցուրտ ու ցամաք գրիչս կարող է նոցա արժանեաց համեմատ ներբողեան հիւսելու, քաւ լիցի, մանաւանդ որ պաշտօնս ալ այդ չէ: Արեմն կարճ խօսքով ըսենք, որդւոց ուղիղ առաջնորդութիւնը՝ գթոտ ու իմաստուն հայրերէն զատ՝ որո՞ւ կարող ենք վրատահիլ, և ահա այս երանելիք մեր ճշմարիտ Հայրերն են, որք երեք կերպով ծնած են զմեզ. ծնան յազգութիւն, ծնան ՚ի կրօնս և ծնան յիմաստութիւն: Շնան յազգութիւն, վասն զի շատ անգամ տքնեցան և անխոնջ ջանացին ազգութիւնն անկարուստ պահելու, և եթէ մինչ ցարդ կ'ապրինք իբրեւ ազգ, այն եւս նոցա իմաստուն հոգացողութե արդիւնքն է: Գարձեալ, ծնան զմեզ ՚ի կրօնս, վասն զի միշտ վարդապետեցին ճշմարիտ հաւատքը և միշտ իրենց կեն

դանի խօսքերովը կ'ուսուցանեն մեզ քրիստոնէութիւնը , կենաց խօսքը կ'աւանդեն մեզ եւ կը սնուցանեն հոգեւոր կաթամբ : Իսկ իմաստութեան եւ գրականութեան մասին սոցա հայր եւ հեղինակ լինելն սով կարող է ուրանալ : Արոց աշխատութեան քողցր պտուղն է զոր կը վայելէ այսօր Հայկազն մանկտին (հեղեցւայ : Ա՛վ կը սովըեցընէ մեզ դիւրութեամբ ամեն ուսումն եւ գիտութիւն մեր յատուկ գրով եւ մեր լեզուով : Արձն արդիւնքովն է , որ այսօր Հեղինացին Հոմեր , Վատինն Վիրգիլ եւ ուրիշ ազգաց շատ պատմիչներ եւ իմաստասէրներ հայերէն կը խօսին մեզ հետ : Ա՛ երջապէս , որոշնորհիւն է որ այսօր քիչ ժամանակ ուան մէջ շատ բաներու կը հմտանամք , եթէ ոչ մեր աստուածասէր , հայրենասէր եւ ազգասէր Հարց սրբոյն Սահակայ եւ Մեսրոբայ : Ա՛հայսչապի է սոցա երախտիքը , այսպէս առաջնորդ հանդիսացան մեզ , եւ թէպէտ գեռ շատ յիշատակաց արժանի գործեր ունին , բայց մենք ժամանակին սղութենէն , մանաւանդ ունին դրաց ձանձրութիւն առթելու երկիւղէն ստիպուած խիստ համառօտել ջանացինք :

Արդ՝ քանի որ յայտնապէս տեսանք թէ Սահակ եւ Մեսրովը ճշմարիտ հայր եւ իմաստուն առաջնորդ են մ'զ երկնից ճանապարհին եւ աշխարհի վրտանգաց հմուտ , քանի որ Հայ ազգը միշտ պիտի վայելէ սոցա արդիւնքը , ուրեմն արդարեւ յիշատակաց արժանի են : Իայց ի՞նչ օգուտ լոկ յիշատակութենէն եթէ չաշխատինք նոցա նմանելու , եթէ չը ջանանք նոցա աշխատութիւնն արդիւնաւորելու , եթէ ամեն մէկերնիս մ'ը անձովն ու վարքովը նոցա անմահ ճակտին վրայ

չը փութանք պսակ հիւսելու , եւ մեր սրտից մէջ անկործան կոթող կանգնելու , վասն զի առաքինի Հարց ա՛մենէն գեղեցիկ արձանը եւ յաղթութեան ամենէն փառաւոր մշտատեւ կոթողը իրենց անունը անմահացընող հարազատ որդիքն են , որք միայն ըստ ամենայնի նոցա նմանելով արժանաւոր յիշատակներ կանգնած կը լինին :

Աւրեմն անհրաժեշտ պարտաւորութիւն է մեզ՝ ամեն հայ անհատի , ոչ միայն երախտագիտութեամբ յիշել եւ հռչակել այսպիսի անզուգահան բարերարաց անունն ու գործը , այլ եւ դովելի նախանձաւորութեամբ նմանիլ նոցա , հաւատով , վարուք եւ գործովք , որովք միայն կարող կը լինիմք փոխարինել նոցա բարեաց , եւ հարազատ որդի համարուիլ : Արդ՝ եթէ կը սարձինք որ մեր Ասինեաց որդիքն ենք , ուրեմն նմանինք նոցա ըստ ամենայնի ՚ի փառս եւ ՚ի պատիւ միոյն Աստուծոյ , որ գիտէ արժանապէս պսակել առաքինի եւ բարեսէր սրտերը :

1871 Յունիս 17

Կարապետ Յ . Մարկոսեան :



ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐՐ

(Շարունակութիւն, տես թիւ 6.)

«Յայտնուեցաւ ուրեմն Տեարք իմ, Լատինաց արարքը, ըսաւ Սրբազան Պատրիարքը, և տեսաք ահա անոնց շարժմունքները, իմացաք անոնց խօսած խորամանկ խօսքերուն յարգը. որոշեցէք ուրեմն և դարձուցէք իրաւունքը իւր սեփական տիրոջը, եւ պատուիրեցէք զզկողին որ մէկ մ'ալ չյանդգնի այսպիսի յափշտակութիւններ ընելու:

Յաւելցուց ասել Սրբազան Պատրիարքն, թէ «Վիտեմ Տեարք իմ, դարձեալ Դրանչիսկեանք չպիտի զիջանին իրենց յայտնի անիրաւութիւնը ճանաչելու, և որիտի պնդեն, թէ այն տեղը ճանապարհ է, և չպիտի զիջանին իրենց անիրաւութեամբ շինած դռները գոցելու, եւ իրենց կից ճանապարհի կողմը դարձնելու. բայց և այնպէս Տեարք իմ, դարձեալ պիտի պատասխանեմ իրենց, Տէրութեօրէնքին համեմատ, ուրեմն կը խընդրեմ Տէրութեան կանոնին համեմատ և դատաստանական օրինաց համաձայն պատասխան տուէք ինձ դուք Տեարք իմ, և Պ. Հիւպատոսն եւս ըստ իւրեանց Տէրութեան օրինաց պատասխանեցէ ինձ ճշմարիտն, որպէս կը պահանջէ արդարութիւնն» ըսելով սկսաւ այսպէս:

«Նախ՝ Դրանչիսկեանց ըսած և պնդած խօսքերնուն համեմատ գործին հակառակ կողմը բռնենք, և ըսենք թէ նոյն իսկ իրենց ըսած տեղը ճանապարհ եղած ըլլայ կամ ճանապարհ է, նա եւ իրենց անիրաւութիւնը աւելի դատապարտելի ընելու համար բոլոր աշխարհի առջեւ, զի ցուք թէ նոյն տեղը թափաւորական

ճանապարհ թարխ-իլ-ամ է. բայց և այնպէս Դրանչիսկեանք դատը երբէք չեն կրնար վաստակիլ. վասն զի իրենց թողած դռներուն և ըսած ճանապարհ հին մէջ տեղի գտնուած հողը թէ և մէկ թիղ ըլլայ, իմ ազգային սեպհականութիւնս է, ըստ օրինաց իրաւունք չունիմ ըսելու թէ իմ դեմնիս վրայէն մի անցնիր. իմ սեպհականութեանս վրայ մի կոխեր, երբէք հրաման չունիմ. ինչ կ'ըսէ դատաստանը, արդեօք կը թոյլատրէ այդպիսեաց:

«Նրկորոք՝ քանի որ նոյն դրան առջեւը եղած գետինն իմ սեպհականութիւնս է, քանի որ Լատինաց գերեզմանատան հիւսիսակողմն հասարակաց պողոտայ կայ, այսինքն թարխ-իլ-ամ, իրենց ճանապարհ տալու պարտաւորութենէ ազատ եմ ըստ Տէրութեան օրինաց. ուրեմն և ես անոր քաջած պատին ճիշտ առջեւէն իմ գերեզմանատանս պատը երբ կ'ուզեմ, կրնամ քաշել Տէրութեան օրինաց համեմատ մէկ ձեռք սղմելու չափ անոնց և մեր պատին մէջ միջոց ձգելով սլ կրնայ զիս արգելուլ. քանի որ իմ ըրածս Լատինաց ըրածին պէս օրինաց և արդարութեան դէմ չէ:»

Համարէ թէ միաբերան պատասխանեցին Նոյն Վսեմութիւնը, թէ Վանի որ հողին տէրը արտօնութիւն չտար իւր հողին վրայէն անցնիլ, դըրան տէրը իր դռնէն դուրս չկրնար ոտք կոխել. բայց եթէ ուրիշ կողմանէ դուռ բանալու դիւրութիւն չունենայ, այն ատեն իրաւամբ կրնայ պահանջել նոյն հողին տիրոջմէն իրեն ճանապարհի համար ըստ բաւականին գետին, և այն ոչ թէ բռնութեամբ, այլ համոզելով որ և իցէ կերպիւ, և նոյն հողին տէրն ալ պարտաւոր է ամենայն սիրով հնազանդիլ և շնորհել. բայց եթէ Լատինք քովերնին հատարակաց

պողոտայ ունին, ինչպէս որ դուք կ'ըսէք և կը պնդէք, երբէք չեն կրնար իրաւունք ունենալ. դուք ձեր սեպհական հողին վրայ կրնաք ձեր պատը քաշել երբ որ ուզէք մէկ ձեռք սրդէ մերու չափ միջոց ձգելով. Տէրութեան օրինաց համեմատ Վատինք ձեզմէն ուզած գետինը ուրիշ կերպով չեն կրնար ստանալ, եթէ ոչ փոխարինելով կամ ծախու առնելով և այն ձեր ամենայն յօժարութեամբը նուէրը ներու միջոց գտնելով. —

« Աւրեմն, ըսաւ Սրբազան Պատրիարքը, այս որ աստիճան անիրաւութիւն է Պրանչիակեանց մեզ ըրածները, և որ աստիճան անհասկանալի է մեր Բարեխնամ Այստեր հպատակասէր բարի կամայը հակառակ Տէրութեան պաշտօնէից կողմանէ ցոյց տրուած թոյլատրութիւնն որ Հայոց ազգին արդար սեպհականութեան իրաւունքները այսպէս իւր աչքին դիմացը ոտնակոխ եղած է և կ'ըլլայ. և արդեօք դեռ պիտի շարունակուի՞, որ վասն շուարեալ մնացեր եմ թէ, եթէ դարձեալ պատահի, որ ազգի, և որ տէրութեան օրինաց կամ դատաստանի դիմեմ: Այլ դուք Պ. Հիւպատոս արդեօք տեսած էք այսպէս արդար և սեպհական իրաւանց չարաչար բռնաբարութիւնը. արդեօք ձեր Տէրութեան կանոնները կը ներքն, կամ ձեր Տէրութեան մէջ օտար Տէրութեան հը պատակներ այսպէս յափշտակութիւններ կրնան ընել. և ընելու ալ ըլլան, արդեօք կարելի է թոյլատրէք, կ'ազգեմ պատմեցէք՝ եթէ ունիք այսպէս անօրինակ անիրաւութեան մասնը

« Այս միջոցին Վսեմ, Վալի փաշայն գործին բացատրութիւնն ուրիշ եղանակի դարձրնել ուզելով ըսաւ. « Փաթրիք տօստում, այս Վատինաց պատը չքաշուած, անոր տեղը ինչ

կար, և այս գործին սկիզբը ինչպէս սկսուեցաւ, որ այսքան գժտութեան պատճառ տուած է, եթէ կարելի է, մեզ պատմէ:

« Աւրեմն գործը նորէն պիտի ըսկրահիք, ըսաւ Ս. Պատրիարքը, մնաս չունի, դարձեալ Չեր Վսեմութեան գըլուխը պիտի ցաւիբայց քանի որ դուք այդ ձանձրութիւնը յանձն կ'առնուք տանիլ, ինչ ուրիշ բան չմնար, միայն սիրով յանձն առնուլ պատմել: Վսեմափայլ Տեարք, ըսաւ, նոյն պատին տեղը արդէն մէկ կանգուն հաստութեամբ հողին երեսին հաւասար պատ մի կար կիսովի քաշուած, կիսովի կ'ըսեմ, այսինքն՝ կէսը մեր և կէսը Վատինաց, այսինքն՝ մեր կողմին երեսը մեզ կը վերաբերէր, իրենց կողմի երեսը՝ իրենց. և նոյն պատը որ յատակին գրեթէ հաւասար էր, իսկ մէջ տեղը տեղ տեղ կէս կանգունի չափ բարձրութեամբ տնկուած քարեր կային, որոնք յայտնի նշան մի կրնային սեպուիլ նոյն պատին կիսովի ըլլալուն. այսինքն՝ Հայոց և Վատինաց ծախսովն շինուած ըլլալուն: Այն տնկուած քարերը ուրանալը և խորտակելով անյայտ ընելը այնքան դիւրին չըլլալը գիտնալով Վատինք, սկսան ՚ի սկզբան ամենայն կերպիւ սիրով և ամենայն խոնարհութեամբ վարուիլ. որ երբէք չէր կարծուեր, թէ այս աստիճան համակրութիւն ցուցնող միաբանութեանէ մը այսպէս խորամանկ խարդախութի գուրս գայ, որ վասն մենք և Յոյնք այսպէս վատահացեալ մնացինք. և կը յուսայինք որ գոնէ այս անգամ խաղաղութեամբ գործ մը գըլուխ պիտի հանեմք. վասն զի Վատինք կ'ըսէին թէ մենք երբեք եղբարք ենք, և գերեզմաններն ալ քանի որ միատեղ են, և միայն սահմանաքարերով որոշուած, իւրաքանչիւր

ազգ. իւր գերեզմանատան պատը իւրեանց որսչեալ սահմանին համեմատ թող շինէ, լմնայ երթայ : Այսպէս խորամանկ խաբէութեամբ զմեզ և զՅոյնս երբ պաշարեցին, և այն առտիճան վտահայրուցին որ համարէ թէ իւրաքանչիւր ազգ սեպհակրան տեղին պատը շինել պիտի սկսէին : Այբ տեսան որ գործադրութիւնը մօտ է, սկսան գործին բոլորովին ուրիշ կերպարանք մի տալ, և աւելի վտահայցընելու համար ըսին՝ Շատ լաւ, իւրաքանչիւր ազգ իւր պատը թող շինէ, բայց դռները ինչպէս պիտի ընեմք, և որ կողմէն պիտի ձգեմք, չըլլայ որ ասոր համար ալ մէջերնիս գծտու թիւն մի պատահի, — վասն զի իրենց նպատակին համեմատ իրենց գերեզմանատան դրան վրայ կասկած ունին եղեր, 'ի հարկէ վերայիշեալ եղանակաւ գործը կատարուելու որ ըլլար, հիմակուան ըրած անիրաւութիւնները չպիտի կրնային ընել, եւ պիտի ստիպուէին իրենց դուռը իրենց կից եղած արքունի ճանապարհին կողմէն ձգել, որ և ոչ մէկուն իրաւանց կը դպչէր : Այր վասն գարձեալ խօսքերնին փոխելով ըսին, — Աւելի լաւ չըլլար որ երեք գերեզմանատան մէկ պատ քաշեմք, և երկու դուռ ձգեմք, դարձեալ ըստ առաջնոյն անցու դարձ կ'ունենամք իրարու գերեզմանատան մէջէն, առանց զիւրար ցաւցընելու : —

“Այլ երբ այս խորհուրդն եւս արդիւնաւորելու վրայ էր, և ըստ այնմ ընելու սկսելու մօտ, դարձեալ խնդիրը փոխելով ըսին, շատ լաւ, բայց այն դռներուն բանալիներն որ ազգին քովը պիտի մնան, եւ ասոր պատճառաւ չըլլայ որ մեր մէջը դարձեալ անհամաձայնութիւններ ծագի և խռովութեան փոխուի, ('ի հարկէ

ունկնդիրը կ'ըսեն այս ինչ զարմանալի խաղաղասիրական հոգի ունեցող կը բօնաւորներ են, երկնային հրեշտակք են ինչ են, որ երբէք խռովութեան առիթ անգամ տալէն կը փախչին և կը հեռանան) :

“Արեմն կարելի չէ արդեօք նոյն դռներուն քով մէկ մէկ սենեակ շէնուի երեք ազգաց ծախիւքք, պահապաններ դրուելով բանալիները անոնց յանձնուի, և որ ազգին որ պէտք ըլլայ և երթայ հօն, պատրաստ գտնայ, այս եղանակաւ ահա երեք ազգաց գերեզմանատուններն ալ նախ անասնոց արածելու տեղ ըլլալէ 'ի զատ՝ հասարակութեան ստնակոխ ըլլալէն ալ կ'աղատի, և մենք ալ 'ի զուր տեղ իրարու սիրտ չենք վիրաւորեր : Այն առաջարկութեան մէջ մնասը միայն Հայոց ազգին պիտի ըլլար, վասն զի թէ երկու դրան տեղերը եւ թէ դռնապանաց համար շինուելիք սենեակներուն տեղը Հայոց ազգին գերեզմանատունէն պիտի առնուէր եւ միշտ ալ Հայոց ազգին գերեզմանատունն երկու ազգաց ոտից տակ պիտի մնայր յաւիտեան : Այր վասն 'ի հարկէ այս խորհուրդը մենք պիտի հերքէինք և հերքեցինք իսկ, և միանգամայն մենք ալ մեր կարծիքը յայտնեցինք, որ և ոչ մէկին սեպհականութեան չգպչելէ 'ի զատ, շատ ալ պարզ էր և դիւրին, այսինքն՝ Հայոց և Յունաց գերեզմանատան մէջ տեղէն ճանապարհ մը բանալ երեք կանգուն լայնութեամբ, որով ամենայն դիւրութեամբ և խաղաղութեամբ Հայոց և Յունաց գերեզմանատուններն իրարմէ պիտի որոշուէին, նոյն ճանապարհը ըսինք եթէ ուղեմք, բայց կը թողումք հասարակաց երթուելու կութեան համար, և եթէ ուղեմք, երկու գլուխը երկու դուռ դնեն :

լով կը փակենք , Հայոց և Յունաց քով մէկ մէկ բանալի կը գտնուին , երբ պէտք ըլլայ , իրենց բանալիով կը բանան կը գոցեն երկու ազգն ալ . այս երկու եզանակն ալ կարելի է և շատ ալ դիւրինն Վճանապէս ալ Հայոց և Վատինաց գերեզմանատանց մէջ տեղը եղած պատն ալ երկու տղոց ծախիւք և գիտութեամբ կը շինուի . ինչպէս արդէն նոյն պատին մէջ տրնկուած քարերն ալ կը յայտնէին թէ նոյն իսկ շինուած ժամանակն ալ այդպէս եղած է . և Վատինք իրենց դուռը իրենց արեւմտեան կողմը կից եղած թափառական սրղոտային կողմէն կը բանան , այսպէսով երեք ազգաց գերեզմանատուները ամենայն գիւրգիւթեամբ իրենց պատերովը որոշուած և առանձին առանձին կը ըլլանքի տակ մնացած կ'ըլլար , և այսօր ալ այս սրտամաշ դատին պատճառ ըլլալու առիթներ երեւան չէր ելլար .

«Վ՛յլ այս մեր օրինաւոր առաջարկութիւնն ինչպէս որ ինքնին յայտնի է խաղաղասէր անձանց , ՚ի հարկէ Վատինաց խռովասէր սրտին ծանր պիտի գար և եղաւ այնպէս . վասն զի եթէ գործը այս եղանակաւ սկսուէր , անոնց չար և յափշտակիչ խորհուրդը իրենց պատին մէջ պիտի խղզուէր մնար . և իրենց նպատակին հասնելու համար միջոցը պիտի պակսէր և չպիտի կրնային իրենց ըսած խորհուրդը գլուխ հանել ՚ի վնաս երկուց ազգացս , մանաւանդ Հայոց ազգին : Երբ այս խաղաղասէր առաջարկութիւն լսեցին , զոր արդէն Յունաց Վճեն . Ս . Պատրիարքըն ամենայն սիրով ընդունած էր , ՚ի խոր խոցեալ խռովեցան Վատինք , և փոքր մի յառաջ իրենց այն քաղցր և հեզ խօսուածքը եղբայրսիրութիւնները զոր առատօրէն կը խօստանային մեզ , առ ՚ի սրաշարել և խաբել , և ու

րով զմեզ զբարեցուցած իսկ էին քանի մը օր առ ՚ի օրինաւոր ստորաստել իւրեանց մերենայութիւնները ՚ի դառնութիւն փոխօճցին , որով և բոլոր ջանքերն և աշխատութիւնները անօգուտ եղան :

Հայք և Յոյնք մինչգեռ այս սրտամաշ եղելութեանց վրայ կը խորհէինք և եւք մը գտնալու համար ուրիշ եղանակ կը մտածէինք , մէկ մը ալ լսեցինք որ Վատինք իրենց գերեզմանատան պատը սկսեր են շինել կայծակի արագութեամբ , և երբ հարցուցինք թէ այդ ինչ ընթացք է , որ բռնած էք , ո՞չ ապօրէն դարձեալ խորհրդակցէինք պիտի , և որ և իցէ կերպիւ համաձայնութեամբ պիտի սկսէինք , այժմ դուք բոլոր ձեր ըսածները մոռնալով անոր հակառակը ՚ի գործ կը դնէք . և եթէ մտքերնիդ բարի է , ինչո՞ւ այդպէս առանձին , ինչո՞ւ առանց լուր տալու մեզի , և ինչո՞ւ այնքան կայծակի արագութեամբ կը գործէք . միթէ անկարելի բան մի էր անոր միջոցը գտնալ , կամ համարել և կամ համարուիլ :

Պատասխան տուին անոնք մեզի ըսելով թէ , «Վ՛յն մենք ալ այնպէս ըլլալը գիտեմք , և կ'ուզէինք ալ , որ և իցէ կերպիւ վերջ մը տալ , այլ երբ նայեցանք որ դուք պատ շինելու միտք չունիք , եթէ ձեզ մնայ , շատ պիտի ուշանայ , մեզի ալ մեր Տէրութիւններէն սաստիկ հրամաններ կան որ առանց ժամանակ անցընելու գերեզմանատան պատերը լրացընեմք , վասն որոյ ձեզ լուր տալու հարկ չմնաց :»

«Սենք այս բանիս վրայօք ինչ օր կարելի էր ընել՝ ըրինք Վղդէթ փաշայի օրով , և անձամբ ինքը եկաւ նոյն տեղը , ինչպէս յառաջագոյն ալ պատմուեցաւ , և անոնց երեսին ըսաւ , «Վրաւունք չունիք Հայոց գե-

րեղմանատան վրայ դուռ ձգելու, քանի որ արեւմտեան կողմը թագաւորական ճանապարհ կայ: Այս Գուտուս ՍութասարըՔը ըլլալովս այդ տեղ Հայոց իրաւանց վրայ ձեր դուռը չեմ ճանաչեր ո: Բայց ո՞վ էր լսողը. ՍութասարըՔին ըսած խօսքերը բուրովին ապարդիւն մնացին, վասն զի արգելուլ չկարողացաւ. ահա այն է, որ մնաց. քանիցս անգամ Բ. Գուռն ձանձրացուցինք, այլ անօգուտ, և չեմք գիտեր թէ ինչո՞ւ համար մեր գործերը այսպէս երեսի վրայ կը մնան:

«Ահա Վսեմ. Տեարք, պատմեցի ըստ ձեր Բարձր հրամանի, ըսաւ Ս. Պատրիարքը, և ահա ակնասեռ եղաք Օսմանեան բարեխնամ Տէրութեան այսքան դարերէ ՚ի վեր հաւատարիմ հպատակին այս Արանչիսկեան միաբանութեան երեսէն քաջած անտանելի նեղութիւնները, հալածանքները և ըրած կորուստները զորս Արանչիսկեանք յափշտակած են և դեռ այսօր նոր իրաւունքներ յափշտակելու ձեռք կը դարնեն: Արեմն Տեարք իմ, կը խնդրեմ իմ կողմէս իմ Սեծաղօր և խնամաւատ թագաւորիս հաւատարիմ հպատակ Հայոց ազգին իրաւանց կորստեան կակիճները Ա. Վեհափառութեան իմացուցէք, և Նորին հայրական քաղօր ակնարկութիւնները և գթութիւնները իւր սիրելի հպատակին իրաւանց վրայ դարձնելու միջնորդեցէք, և եթէ Գուք Վսեմ, Տեարք, այսքան մանրասոյզ քննութեամբ յայտնի տեսնելն և խմանալն յետոյ դարձեալ զանց պիտի ընէք, ինչպէս ըրին Ձեր նախորդները, կը խնդրեմ այս օրէն ասացէք ո՞ւմ դիմեմ, զո՞վ աղաչեմ, զո՞վ միջնորդ գտնամ, ասացէք ինձ կ'աղաչեմ, զի այս ցաւերը զորս Արանչիսկեանք հետզհետէ հասուցած են մեզ

և միշտ կը հասցընեն, ալ անտանելի մեղի և անհամբերելի: Ասացէք Տեարք իմ, եթէ Բարեխնամ Տէրութիւնը չուղէր մեր աղաչանքները լսել, մեր կորուստները տեսնել, որ երբէք չեմ յուսար, տասցէք մեզի. վասն զի մենք հոս այս մարդկանց ձեռքը դերի և խաղալը չեմք եղած. ալ չպիտի համբերեմ. և ամենայն զօրութեամբ պիտի բողոքեմ և չպիտի դադարիմ ՚ի բողոքելոյ:

«Սեծաղօր Օսմանեան Տէրութեան Վեհափառ թագաւորին մերոյ, ըսաւ Վսեմ. Վալի փաշայն, երբէք շնորհք իւր հպատակասէր բընութիւնը, որ իւր իշխանութեան տակ գտնուած հպատակաց արդար իրաւունքը կորսուի, ասոր յայտնի ապացոյց կրնայ սեպուել ձեր սուրբ Յակովբայ տաճարին խնդիրը որ այսօր աչքերնուդ դիմացն է, որուն համար ահա յատուկ հրամաններ եւ քննիչ խրկեց ՚ի Պօլսոյ Նորին Վեհափառութիւնն, և զմեզ ՚ի Վամասկոսէ կոչեց:

«Այո, եղած է ժամանակ որ Տէրութեան օրինաւոր չեն կրցած հաւկրցընել և վեր ՚ի վերոյ հասկցուած բաներուն վրայօք ալ յանկարծ վաճառահատութի չլրնար ըլլալ և ըլլայ ալ օրինաւոր չէ, որ վասն կ'երկարի երբեմն միջոցը, բայց ոչ երբէք կը մոռցուի, այլ երբ օրինաւոր կերպիւ գործին իսկութիւնը կը յայտնուի և կզտուի, իսկոյն արդար վճռահատութիւնն ալ վրայ կը հասնի, ասոր պէս ալ նայեցէք այս գործերուն մէջ որքան կնճռալի կէտեր կան, որ մենք երբէք չէինք գիտեր, և չէր ալ յուսացուեր, որ այս աստիճան հակառակութիւններ եղած ըլլան, անյուսալի բաներ, անլսելի խարդախութիւններ գուրս ելաւ լցուեցաւ, է որ դուք

անձամբ պատմեցիք, և է որ գործը
ինքնին յայտնեց. ՚ի հարկէ այս մեր
տեսածները, քննածները և ըսածները
բոլոր պիտի տեղեկագրեմք ՚. Վրան
և պիտի ծանուցանեմք մի ըստ միովէ,
և ՚. Վուռն ալ ըստ այնմ կը անօրիւ
նէ. ուրեմն դուք երբէք կասկած մի
ընէք. արդարապէս գրել, և բանին
ճիշտ էութիւնը հասկըցընել մեր պար
տաւորութիւնն է, ուրեմն դուք մի
ամիտ կացէք, յ ըսելով վերջացուցին
թէ Վ սեմ, Վ ալի փաշայն և թէ
Վ սեմ. Սիւնիֆ էֆէնտին իրենց խօս
քերը:

Վարձեալ Վ սեմ, Վ ալի փաշայն
յաւելցուց ասել թէ « փաթրիք տօս
թուամուզ, ձեր ըսածներէն շատ բա
նէր հասկցուեցաւ. և շատ մը մութ
մնացած պարագայներ լուսաւորուե
ցան, բայց ինձ այնպէս կը թուի, որ
նոյն դռները այդպէս անիրաւտբար
ձգուելուն գլխաւոր պատճառ մը պի
տի ըլլայ, վասն զի ինչպէս որ թէ ի
րենց քաշած յատակագիծը (խարդայն)
թէ ձեր քաշածը յայտնի կը ցուցընեն
որ Վ առինաց գերեզմանատան արեւ
մտեան կողմը օրինաւոր ճամբայ կայ
և իրենց աւելի գիւրբին է անկէց դուռ
բանալ, այդ մտրդիկները այդքան ի
րաւունք չճանչցողներէն չեն, ՚ի հարկէ
գիտեն, բայց ինչպէս կարելի է որ ի
րենք ըստ իրենց քմաց այլոց իրաւանց
վրայ դուռ ձգեն, բոլոր աշխարհի
և Տէրութեանց հակառակ է այդ և
կատարեալ բռնութիւն. ուրեմն ե
թէ այս բանիս յատուկ պատճառ մի
կայ թէ ձեր և թէ Վ առինաց կողմա
նէ, այն ալ եթէ իմացընէք, աւելի
լաւ կ'ըլլայ, գուցէ գործին ալ աւելի
գիւրբութիւն կ'ընծայէ, ըսէք ուրեմն:

« Բանի որ Ձեր Վ սեմութիւնը կը
խուզարկէ և կը կամի իմանալ բուն
խիւս արմատն սոյն սրտամաշ գործոյն,

ուրեմն պարտաւոր եմ Ձեր Վ սեմ
թեանը պատմել նոյն խիւս արմատա
կան պատճառը, բաւ Վ. Վատրիարքը
և սկսաւ այսպէս պատմել միւրամիովէ:

« Ըստ գերեզմանատան դռներուն
ինդիրը ուրիշ ինդիրէ ծագած է որ
շատ հետաքրքրական է, և նոյն դռնե
րուն ձգուելուն մէջ եղած գաղտնի
նպատակը յայտնել չեն ուզեր Վ ա
տինք. վասն զի իրենց ըրած յայտնի
անիրաւութե իրենք վկայած կ'ըլլան,
բայց ես կը յայտնեմ Վ սեմափայլ
Տէրք: Ինչպէս յատակագիծին մէջ
կ'երեւի, Ս. Սիօն լեւան վրայ Վ առի
նաց գերեզմանատան կից պարտէզ մի
ուրեմն մեզ Հայոց սեփհական. Վ ա
տինք իրենց միտքը դրած են ՚ի վա
ղուց նոյն պարտէզէն բաւական մե
ծութեամբ մաս մը, այսինքն՝ 750 կան
գուն գետին իրենց կողմը կորզել որ
և իցէ եղանակաւ, ինչպէս ըրած են
իրենց գերեզմանատան մէկ մասը զոր
վերը յիշեցինք, որով իրենց գերեզ
մանատունն աւելի ընդարձակել, և
այս ինդիրը ժամանակ ժամանակ մեզ
առաջարկեցին թէ և զանազան եղա
նակաւ, այսինքն երբեմն իբր շնորհք
և ՚ի սէր եղբայրութեան խնդրելով,
երբեմն ուրիշ տեղի հետ փոխել ու
զելով, երբեմն սպառնալիքներով ահ
և սարսափ ձգելով իրենց պաշտպան
եղող Տէրութեանց անուհով, երբեմն
միշտ հաշտ ակամբ նայելու պայմա
նաւ, և երբեմն մեծ մեծ խոտամուկ
ներ ընելով, լաւ ևս է ասել խաբել
կամելով զմեզ իբրև տհաս մանուկ,
ինչպէս Վեսարիոյ մէջ այն Հրէայն,
որ իւր խորամանկ խաբեբայ բնու
թեամբն յափշտակել կը ջանայր տը
ղուն ձեռքէն պատուական ոսկին,
Վասնք կը կարծեն թէ Հայոց միաբա
նութիւնը Սիօն լեւան վրայ ունեցած
իւր սեփհական տեղին յարգը և պա

տիւր չգիտէր : Այլ երբ տեսան որ անոր յարգը իրենց կարծածէն աւելի լաւ գիտէ, և գիտնալով Ատոննաց այդպէս խարդախ խնդիրները մերժեր էր և պիտի մերժէ յաւիտեան, քանի որ չեն ճշմարիտ, չեն արդար և չեն անխարդախ : Այլ այս եղանակներով Հայոց միաբանութիւնը չկարողացան խաբել, ելան այս գերեզմանատան պատերը շինելու խնդիրը հնարեցին. այսինքն՝ յանիրաւ տեղը Հայոց դերեզմանատան վրայ երկու դուռը մէկէն ձգել. և մենք որքան խորհեցանք և խօսեցանք, բողոքեցինք, իրաւունք պահանջեցինք, և այլն. ամենն ալ ՚ի դերեւ ելաւ, քանզի մտիկ ընող չուկար, քանզի Տէրութեան պաշտօնեաներն անգամ բարեխնամ թագաւորիս հրամանները կատարելու դժուարութիւններ կը հանէին. ՚ի հարկէ այն անվայել էն թրիքներու երկիւղէն խեղճ Հայոց ազգին արդար սեպհականութեան իրաւունքը ոտքի տակ պիտի երթար. պիտի բռնաբարուէր բողոքը, լալը, ողբալը, աղաչանքը, պաղատանքը անլսելի պիտի ըլլար, ինչպէս որ եղաւ : Ատոնք յաղթութեան դռները հաստատեցին իբրեւ Փարիզի յաղթութեան կամարը, Փարիզի շնորհիւ, սկսան յաղթութեան դռներէն մտնել ելլել ՚ի նախատինս Հայոց միաբանութեան, կարծեցին որ եղաւ կատարեցաւ. բայց զրկեալ Հայոց միաբանութիւնն կ'աղաղակէր և ասէր, զրկեալ եմ յարգար և սեպհական իրաւանցս շնորհիւ կ'աղաղակեմ առ Ատոննա և չկամեր լսել և իմ իրաւունքս ետ դարձնել, կ'աղաղակեմ առ Քաղաքապետն, նա եւս ոչ կարէ զիմ իրաւունս կորդել բռնաւորին ձեռքէն, կ'աղաղակեմ առ Ք. Գուռն, և նա ոչ գիտեմ ինչու իմ խնդիրներուս կարեւորու-

թիւն չտար և չպատասխաներ. թէ և այս աղաչանաց ձայնը չէր լսուեր, բայց զրկողին ականջին սուր ազդեցութիւն կ'ընէր. իրեն խիղճը ներսէն զինքը կը տաքնասպէր : Այս խորճ ճահարութենէն ալ ազատելու համար և Հայոց միաբանութեան բերանը գուցելու համար որ չաղաղակէ, միջոց մը գտնելը չուշացուցին Պրանչիսկեանք, և յաջողեցան ալ և գտան իրենց կամակատար Աթոլիկ Գոնսօլոզին մէկը, որ նախ իւր կողմանէ և յետոյ նոյն միաբանութեան կողմանէ շատ թախանձանօք կը խնդրէր նոյն վերայի շեալ պարտիզին կտորըն և կ'ըսէր, թէ «Աթէ կը հաճիք տալ նոյն կտորն, ես Պրանչիսկեանները կրնամ համոզել որ նոյն ձեր իրաւանց վրայ բացուած երկու դուռներն ալ բողոքողին ձեր ուղածին պէս անյայտ կերպիւ գոցուին : Այլ այս խնդրոյն բացասական պատասխան տրուեցաւ, ուրիշ անգամ մի դարձեալ գալով ըսաւ. «Աթէ կամիք նոյն կտորն տալ, դռները գոցուելէն զատ՝ նոյն պարտիզի կտորի արժողութիւնն կամ անոր փոխարէն դետին մը կուտանք :» - Քսի, «Պ. Հիւպատոս, նոյն տեղին համար դրամ չեմ ընդունիր. այլ տեղի հետ կրնամ փոխել երբ ուղած տեղս ըլլայ, այնպէս որ գոնէ կորանցուցած տեղիս ցաւը ինձ մոռցնելու չափ արժողութիւն ունենայ :» - Քսաւ՝ շատ լաւ, ըսէ, որ տեղ կուզես : - Քսի՝ Գեթսեմանի ձորին մէջ լ) : Աստուածածնայ գերեզմանին մօտ Ատոննաց պարտէզը, ուր կան ութ հատ հնագոյն ձիթենու ծառք որջոնի ծառք կոչուած, Քրիստոսի աղօթար տեղը ոյն մօտ : Այլ այս լսեց Պ. Հիւպատոսը, ժպտեցաւ և ըսաւ. «Աթէ կարելի՞ բան է այդ. և ինչպէս կրնայ լինիլ :»

« Աւրեմն ասացի ես ալ , ինչպէս կրնայ լինիլ Ս . Սիօն լեռան վրայ 750 կանգուն գետին ոչ ինչ տեղի մը հետ փոխել . Չեր մեծութիւնը միթէ չփոխեր , որ մեր տեղը ոչ թէ միայն մեզ համար , այլ ամենայն ազգաց համար եւս Ս . Սիօն լեռան առնունով պանծալի և տօնելի անուն մի է (մուգատտէս) , ձեր տալիք տեղէն աւելի յարգի և աւելի մեծ , ուրեմն մտքերնիդ ինչ է . ոչ առաքէն դուք ըսիք թէ ուղեցէք Վատինաց ձեռքը գտնուած տեղերէն ուր աեզ որ կ'ուզէք , և ես ըստ այնմ ասացի . ահա , եթէ չէք կամիր , շատ լաւ . մեր գետինը մեզ պէտքէ : » Մյս բանին վերայ շատ մը խօսակցութենէ ետքը վերջապէս այն օրն ալ գնաց :—

Վարձեալ ուրիշ օր մի ալ գալով նոյն հիւպատոսն , կ'աղաչէր և կ'ըսէր . « Ազգակի ինձ համար կը խնդրեմ ինձ պառկելու տեղ ընելու համար ինձ շնորհք ըրէք , ես իմ գերեզմանս պիտի շինեմ նոյն տեղը իմ անձիս համար , և այլն :—

Ասացի , Պ . Հիւպատոս , դուք ինչո՞ւ համար այսպէս չոր և ցամաք տեղեր պիտի պառկիք . Գնացէք ձեր այն դուարձալի , ջրով , խտտով և ծառով և ծաղիօք լի Աւրոսպայն հոն պառկեցէք . քանի որ այնպէս հայրենիք ունիք կարեւորութիւն չկայ ձեզ գալ ինձ նոյն կտորին համար այնքան աղու չելու և ինձ չսելու :— Նոյն օրը կ'երեւար որ իւր լեզուին տակը բան մը կար , կ'ուզէր դուրս հանել , բայց հանելու դժուարութիւն կը կրէր , խօսքը շատ մը ասդին անդին պտրուցընելէ ետքը ձեռքս բռնելով վերջապէս համարձակեցաւ սոյն հետագայ խօսքերը արտասահանել բերնէն , այսինքն՝ թէ կ'աղաչեմ դուք այս կրտորը Վատինաց շնորհեցէք , և ես նոյն

շնորհքին տակը չեմ մնար , և զձեզ գոհ ընելու չափ կ'աշխատիմ , և այլն :—

Բի , Պ . Հիւպատոս , այդպէս աննշան խօսքերէ և մութ խնդիրներէ բան չեմ հասկընար . կը խնդրեմ ձեր խօսքերը բացայայտ խօսիք՝ թէ ինչ ըսել է եթէ նոյն գետինը ձեզ տրուի , զիս գոհ ընելու չափ Չեր աշխատիք :—

« Սա ըսել կ'ուզեմ ըսաւ , դուք շնորհեցէք նոյն գետինը Վատինաց , և ես խօսք կուտամ ուղղակի ծանուցանել Վայսեր Չեր ըրած առատաձեռնութիւնը , և նոյն տեղին յարգը եւս կը ծանուցանեմ Տէրութեան , և ՚ի հարկէ անոր փոխարէն ձեզ համար Վայսը օրինաւոր բան մը կը զրկէ , » և այլն :

« Հիմա իմացայ Չեր աշխատութիւնն , մեծապէս շնորհակալ եմ Պ . Հիւպատոս ըսի , այդ աշխատութիւն ինձ համար մի կրէք . այդ թող մնայ . կեցիք Չեզ ըսելիք ունիմ : Այդ խօսքը ձեր բերնէն հանելու համար կըրած նեղութիւննիդ ինձ համար բաւական է , դուք Պ . Հիւպատոս , այդ խօսքը ձեր բերնէն հանելու չէիք այդ խօսքը ձեզմէ չսած , դուցէ կարելի էր , թէ և չէր , այլ քանի որ այդ խօսքը ձեր բերնէն ելաւ , ահա այժմ ամենաանկարելի եղաւ այդ գետինը Վատինաց որ և իցէ կերպիւ տալը . վասն զի ձեր այդ խօսքը Պ . Հիւպատոս , ինձ համար անսասնելի է . դուք ինչ կարճեցիք Հայոց Պատրիարքը , այսպէս սնտախ բաներու խօսքուելով իւր Վղբին սեպհականութիւնն (որու վրայ իր անձը դրած է) օտարսոյ կը շնորհէ կարճեցիք ՚ի նախատինս իւր անուանը ազգաց յազգս : Բաւ լիցի , Հայոց Պատրիարքը այդ ստորութիւնն չը կրնար ընդունիլ . այդպէս սնտախ բաներով չկրնար փոխանակել իւր սիրե-

ըն Վազգի թրինաւոր և նուիրական իւր տուռնքը . ասան ինձ , քո կայսերդ ինձ զրկելիք պատուանշանին արժողութիւնն քանի հարիւր ոսկիի արժողութիւն կրնայ ունենալ . թող ըլլայ հինգ հարիւր լիւրայի , առաւել եւս հազար լիւրայի , ասկէց աւելի կարելի է : Ոչ , ըսաւ Պ . Հիւպատոսն , և ոչ երեք հարիւր լիւրայի , գուցէ ըլլայ երկու հարիւր կամ երկու հարիւր յիսուէն լիւրայի , բայց և այնպէս գիտէք . արժողութեան վրայ չէ թագաւորաց տուած պարգեւը , միայն անունը բաւական է , և գինն անգին . և ձեզ համար մեծ պատիւ կը սեպուի :—

« Ինձ համար մեծ պատիւ և անգին գանձ և բարութիւնն իմ սիրելի Վազգիս իմ ունեցած պարտաւորութիւնս ճանչնալու է . իմ Վազային սեպհականութեանց և իրաւանցս վրայ թրինաւորապէս և հաւատարմաբար , ըստ իմ պարտաւորութեանս հսկելու է , և նոյն պարտաւորութիւնս կատարելէս կը ծագի այնպիսի մեծ պատիւ մը , որ ասկից աւելի մեծ և անգին գանձ և պատիւ ինձ համար չկրնար գտնուիլ ՚ի ներքոյ արեգական : Այդ դուք Պ . Հիւպատոս կը զարմանամ թէ ինչպէս համարձակեցաք առաջարկել այնպէս վատ և ամենավատ խնդիր մը . և յուսմէ՞ ստիպուեցաք , և ո՞վ յորդորեց զձեզ այդպէս ցուրտ , անկի առաջարկութիւն մը ընել դիմացնուդ մարդուն բնաւորութեան վրայ առանց տեղեկութիւն ունենալու : Ինչո՞ւք թէ Չեր թագաւորին ինձ զրկելիք պատուանշանն իմ քիչ մը յառաջ ըսածիս չափ մեծ արժողութիւն ունենայ , և ձեր ըսածին չափ ալ մեծ պատիւ բերած ըլլայ իր հետը . ես ինչէ՞ն պիտի ստիպուիմ այն արժողութեան և այն պատուոյն խառուելու . միթէ իմ սիրելի Վազգս և

իմ բարեխնամ Տէրութիւնս ՚ի պատիւ իմ Վազգիս պակաս թողուցեր է , և զրկեր է զիս այն պատիւներէն , ոչ ապաքէն կուրծքիս վրայ լեցուած է արդէն . եթէ երբէք չունենամար ինչն համար այդ անարգ անուէն վրաս առնեմ իմ ազգային սեպհականութիւնս իմ սիրելի Վազգիս արեամբը գնուած գետինը այլոց շնորհելով իբրեւ անհաւատարիմ և իբրեւ մատնիչ . քաջ գիտցէք Պ . Հիւպատոս , մարդ աշխարհիս վրայ միայն անուան համար կ'ապրի . և այն բարի անուան , վասն զի ըստ գրոյն՝ « Ալ է անուէն բարի , քան զգանձս բաղու մն : »

« Այս խօսակցութիւններէն յառաջացած սրտիս կակիծը չկրնալով զսպել գլխիս վեղարէն գնտասեղ մը (թօփու) քաշելով ըսի իրեն , նայեցէք Պ . Հիւպատոս , այս գնտասեղին հատը մէկ փարայ կամ երկու հատը երեք փարայ կը ծախուի , բայց երբ իմ Վազգըս կամ իմ թագաւորս իմ պաշտօնիս մէջ հաւատարիմ գտնուելուս համար մէկ հատիկ այսպէս գնտասեղ մը զրկեն ինձ՝ գլխուս վեղարին գործածելու համար , ձեր Սեծութե՞ ձեռք ձեր թագաւորէն գալիք հազար լիւրայի արժողութեամբ պատուանշանէն և իւր հետը բերելիք պատիւէն աւելի մեծ պատիւ կը համարիմ ինձ . իմացա՞ք հիմա Պ . Հիւպատոս Հայոց Պատրիարքին տմարդի բնաւորութիւնն : Ահա երբեմն այսպէս օգտակար կարծուած առաջարկութիւններ որ առաջարկողին աչքին մեծ կ'երեւայ , այլ երբ առաջարկողը առանց որոշելու ընդունողին բնաւորութիւնն առաջարկէ , այսպէս այն պատուական շնորհքը իւր յարգը կը կորսուցնուի : Աս չեմ կրնար իմ Վազգիս և Տէրութեանս գէ՞մ անհաւատարիմ գտնուիլ սնտոի և ան-

ցաւոր պատուանշանի մը համար, կը խնդրեմ Պ. Հիւպատոս ոչ այս առաջարկութիւնն և ոչ նոյն գետնին խընդիրը կրկնէք ինձ ուրիշ անգամ, եթէ կ'ուզէք մեր բարեկամութեան կապը չխզել. և կը խնդրեմ ներողամիտ եղիք իմ պարտաւորութենէս ստիպեալ ըսած խօսքերուս ծանրութեանը, զորս համարէ թէ յակամայից ստիպուեցայ արտասանելու, զոր դուք ալ գիտէք :

« Պ. Հիւպատոսին այս բանին վերայօք խօսածները իմ անձիս գովութեան վերաբերելուն համար զանց կ'ընեմ Չեր Վսեմութեան պատմելու. այսբանը իմացէք որ բոլոր ըսածներուս իրաւունք տալէն ետքը, ամենայն սիրով բաժնուեցաւ մեզմէ :

« Ահա Վսեմ. Տեաքք, կատարելապէս իմացաք Սիօնի գերեզմանատան խնդրոյն ծագման բուն աղբիւրը, և տեսաք որ Օսմանեան բարեխնամ կայսեր հաւատարիմ հպատակ Հայոց ազգը որ աստիճան նեղութեանց եւ տառապանաց տակ ընկձեալ իբրեւ գերի կեանք կը վարէ, այսպէս օտար ժողովրդոց և օտար ազգեցու թեան ձեռքէն, որք որ և իցէ կերպիւ բոլոր ճիգերնին կը թափեն մեր և մեղապիտի Տէրութեան հարազատ հպատակաց ձեռքը գրտնուած սեպհական ստացուածքները յափշտակելու և իւրացնելու համար, մինչեւ անգամ Հիւպատոսաց և Վեսպանոսց ձեռքք ինչ գաղտնի գործեր կը դառնայ, զորս միայն Աստուած գիտէ :

« Ահա ինձ ինչպէս որ պատահեցաւ Չեր Վսեմութեան առջեւ մի ըստ միջէ պատմեցի. և Ղուք լեցիք Տեաքք իմ, այս գործիս մէջ դարձած մեքենայութիւնները, դուք ինքնին դատեցէք եւ մեր իրաւունքը մեզ

գարծուցէք. Շէֆքեաթլը Վֆէնտիմիզ Փատիշահըմըզն ազիզ պաշը իչլեն օլտուն, վէ սէլամ :

Այսպէս վերջացաւ Սուրբ Տեղեաց խնդիրը եւ տեղեկագրեցաւ եւս Ռ. Ղուռն. դեռ կ'ըստասեմք նոյն խնդրոց համար ելլելիք արդար վճիռներուն որ մենք ալ մեր կորուսած սեպհական իրաւանցս Տէր ըլլամք. ՚ի հարկէ այն ալ մօտ է Սայէի շահանէտէ :



ԿԱՆԳԱԳՈՒԹԻՒՆ

Ս. Ռ. Ո Ղ. Զ Ո Ւ Թ. Ե Ս. Ն

(Շարունակութիւն, տես թիւ 6 :)

Ղորա, որք միշտ ընթեռնուն և գըրեն, բազում անգամ վշտանան աչալուութեամբ կամ նուաղութեամբ աչաց. մանաւանդ որք ընթեռնուն կամ գրեն յերեկոյեան կամ ՚ի գիշերի ՚ի լոյս ճրագի, որ գրեթէ վնասակար է աչաց յոյժ, յորմէ զգուշանալ պարտ է, որչափ և հնար է : Բայց եթէ որ ոչ կարէ թողուլ զայս սովորութիւն, բարւոք է նմա հովանաւորել զաչան ՚ի բոցոյ ճրագին ՚ի ժամու ընթերցման կամ գրելոյ : Այլ նուաղ աչաց յոյժ օգտէ ցուրտ ջուրն յաւուրն երկիցս կամ երիցս լուանալով զայն, ընդ որ և եթէ խառնեցի սպիտակ օղի իբրեւ դքսան շիթ ՚ի մի բաժակ ջուր, օգտէ յոյժ :

Չիք ինչ վաթարագոյն ախտ քան որ պատճառի յապահանեալ հիւթոց, որ է արդիւնք խորախորհուրդ մտածողութեան, և վշտալի քան զամե-

նայն ցաւս է աստ աստնդանոց, այս
ինքն՝ աղականու թիւն աղեաց, որ զը
րեթէ հասարակ է ՚ի մէջ ուսումնասի
րաց, յորմէ յառաջ գաց նուազու թի
անդամոց, սրահասու թիւն ասորժա
կի, անհամու թիւն ճաշակի, մշտական
թաղձու թիւն մտաց, անդադար եր
կիւղ մահու և սէսպէս այլանդակ
և զարհուրելի խորհուրդք, զորս բը
ժշկել անհնարին է :

Ուսումնասէր անձինք առ ՚ի դիւ
րու թիւն տալ մտացն ոչ միայն սրա
տին ընդհատել զընթեռնու ըն և բղ
գրելն, այլ և հարկէ նոցա տալ զանձինս
և յայլ աշխատասիրու թիւնս առ ՚ի
զբաղել զմիտան ցայն աստիճան, որով
խոստու մուսային մտածողութիւնք
խորաքննին գործոց :

Ուսումնասէր անձինք բազում
անգամ ամօթ համարին ընկերել ընդ
այնոսիկ, որք չեն համբաւեալ գրա
ւորական գիտու թեամբ, բայց այս է
գլխովին անմտութիւն. քանզի չէ բը
նաւ ամօթ, յորժամ մտանէ որ ՚ի մի
սքանութիւն ինչ առ ՚ի դիւրել մի
այն զլցեալ միտս իւր ուրախ և զը
ւարձ ընկերակցութեամբ, թող զի և
ընկերակցութիւն երեսայոց երբեմն
բաւնայ զթաղձութիւն մտաց, յորմէ
չէ սրտախորշիլ բնաւ :

Հարկաւոր է յոյժ և կարի օգտա
ւէտ ուսումնասէր անձանց, յորժամ
վիճակ իւրեանց ձեռնասու է նոցա
ընտրել արտաքոյ տան ընդարձակ, օ
գաւոր և զուարճարար տեղի, որ ոչ
միայն արգելու զվատթար ներգոր
ծութիւն փակեալ օգոյ տան, այլ և
զուարթացանէ զզորութիւն մար
մնոց և զկարողութիւն մտաց :

Որ և իցէ, որ միշտ ընթեռնու
կամ գրէ, սրտա է կարի մտադիր լը
նիլ զբութեան նստելոյ, սրահելով
զինքն միշտ ուղղորդ. զի սրպէս ա

ստցաւ՝ կորացեալ գրութիւնն մեծ
վնաս պատճառէ աղեաց և թորին՝
ճնշելով զայնս :

Ղեմեթով և բարձր ձայնիւ ըն
թեռնու ըն բազում օգուտս ընծայէ
ուսումնասէր աշակերտաց. զի ոչ մի
այն կրթէ զթորն, այլ և զբողոր մար
մինն, և զարթուցանէ զըմբռնողա
կան զորութիւն մտացն :

Նստիր և վայելուչ ժամանակ ուս
ման է առաւօտն, բայց և այս ժամա
նակ է յոյժ պատշաճ եղանակ կրթու
թեան, յորում ստամոքսն դատարկ է
և զօրութիւն մարմնոյննորոգեալ ՚ի բը
նոց վասն որոյ եթէ ուսումնասէր ան
ձինք ծախեսցեն զմասն ինչ առաւօ
տու արտաքոյ տան կրթութեամբ,
մեծ օգուտս ընծայեսցեն առողջու
թեան անձին և զօրութեան մտաց :

Նրաժշտականութիւնն է բարե
յաջող միջոց ՚ի դիւրել զվճատեալ
միտս, և ոչ սակաւ օգուտն ուսումնու
սիրաց, եթէ իւրաքանչիւր որ ՚ի նո
ցանէ ուսանիցի զայս գիւրարար ա
րուեստ, և ՚ի խանջիլ մտացն ՚ի խորա
քննելն մտածողութեան և առ ՚ի խաղա
ղել զայն և ՚ի նորոգել զառաջին զօրու
թիւնն, զբաղեսցէ զինքն ՚ի ժամն ինչ ՚ի
քնար և յերգս : Ուսումնասէրք կամ
ճանր աշխատասէրք ՚ի լքանիլ զօրու
թեան մարմնոց և մտացն սովոր են առ
՚ի զարթուցանել զայն կրկին, առնուլ
զօրաւոր ըմպելի ինչ, բայց այս դեղէ
անօգուտ և փորձիւ վնասակար յոյժ :

Ոչինչ է այնպէս օգտաւէտ և դեղ
զօրաւոր լքեալ մտաց, որպէս հեծա
նելն ՚ի ձի և վարելն զնա ՚ի տասն կամ
յերկուստան մղոնս, յորմէ ՚ի դառ
նալն սակաւիկ մի հանդէլ. և աղա
մատչիլ կրկին ՚ի գործ : Որպէս և ես
առնէի միշտ, զի յորժամ ճանր պա
տաղումն ուսման կամ գործոց ինչ
լքուցանէր զիս խոստու, առ ժամայն

հեծանելի յերկվար իմ և վարելի բղ-
նա ՚ի տաան կամ յերկոտասան մղնա
յագարակի ուրու մն բարեկամի, և մը
նայի անդ մի կամ երկու աւուրս,
պարապելով ՚ի պէսպէս զուարճալի
խաղս և ՚ի զբօսալի տեսարանս, և ապա
դառնայի ՚ի տուն ՚ի գործ իմ զը-
ւարթ մտօք, ուրախ սրտիւ և նորո-
գեալ զօրութեամբ մարմնոյ :

Ասու մնասէք կարեն վայելել
զամենայն տեսակ կերակրոց, բայց
պարտին զգուշանալ նախ՝ զի մի իցէ
այն վնասակար. երկրորդ՝ զի մի ուտի-
ցեն անժամանակ կամ անդրքան զչափ
յագեցման. և երրորդ՝ զի մի իցէ այն
անբարեխառն, քամոտ, նեխեալ ջեր-
մաբնոյթ կամ դժուարամարս :

Անթրիք նոցա պարտ է լինիլ միշտ
թեթեւ, դիւրամարս և նախ քան
զերեկոյանալն :

Վնասաւորագոյն ըմպելիք նոցա
պարտ է լինիլ ցուրտ ջուր. կարեն և
երբեմն առնուլ սակաւ ինչ լաւ գա-
րեջուր կամ օշարակ ՚ի հիւթոց խրն-
ձորի, ՚ի շաքարէ, ՚ի հիւթոց լիմնի,
նարնջի, ամլոյ, ծաղկանց և ՚ի քայա-
խէ: Ասե երբեմն գինի և ցքի խառ-
նեալ չափաւոր ցուրտ ջրով :

Արթու թիւն նոցա իցէ միշտ ՚ի
բաց օդի. և որպէս ասացաւ՝ առա-
ւել օգտաւէտ և առողջարար կրթու-
թիւնք են ճեմեղն, հեծանելն ՚ի ձի,
մշակելն ՚ի պարտիզի և խաղալ գոր-
ծունեայ և զբօսալի անձնամարզու-
թեամբ, այսինքն՝ պարել, ոստնուլ,
վազել, լողալ, և այլն. բայց հայիլ
պարտ է, զի մի կրթութիւնն իցէ ան-
դրո քան զչափ կարողութեան մար-
մնոյ, որոյ վնասն մեծ լիցի քան զօ-
գուան. և ամենայն կրթութիւն
պարտ է լինիլ յառաւօտ, յորում
ստամոքսն դատարկ է և զօրութիւն
մարմնոյն նորոգեալ ՚ի քնոյ :

Աս և ոչ սակաւ օգտէ առողջու-
թեան՝ ցուրտ ջրով լուանիլն յամե-
նայն առաւօտու հեղով ՚ի վերայ
գլխոյ, որ կազդուրէ և պնդէ զջիւղ-
սըն, և նորոգէ զզօրութիւն մար-
մնոյն, յատկապէս ՚ի ջերմ եղանակի
և ՚ի ջերմ կլիմայի, որ կարէ փոխա-
նակիլ կրթութեան, զոր չէ պարտ
բնաւ զանց առնել :

Վնենայն կարգադրութիւնք յիշա-
տակեալ ՚ի սոյն գլխոջ պատկանին առ-
հասարակ և հաշուէկալաց, գրագրաց,
սեղանաւորաց և այլոց, որք յառա-
ւօտէ սկսեալ մինչեւ ցերեկոյ նըս-
տին ՚ի գործ իւրեանց առանց իրիք
կրթութեան, յորոց և բազմաց կեանք
վտանգին պէսպէս անբժշկելի հիւան-
դութեամբք :

ԳԼՈՒԽ Դ.

Սնունդ Ինչոյ :

Վնասակար կերակուր և անկանոն
կիրառութիւն կերակրոց պատճա-
ռէ զպէսպէս վտանգաւոր հիւան-
դութիւնս : Վանզի չիք տարակոյս,
զի կերակրով միայն փոփոխին ամե-
նայն խառնուածք մարմնոյ, որով հը-
նար է հեղուկացն նրբանալ կամ
թանձրանալ, մեղմանալ կամ բարկ
կրթիլ, կծուիլ կամ թթուիլ, մած-
նուլ կամ լուծանիլ յաստիճան իմն
վնասակար :

Չէ նուազ և ներգործութիւն
կերակրոց ՚ի վերայ թանձրագոյն մա-
սանց մարմնոյ, այսինքն՝ ՚ի վերայ մկա-
նանց և ջղից, զորս պնդէ կամ թուլա-
ցուցանէ, և զնոցին զգացողութիւնն
յաւելուլ կամ նուազեցուցանէ :

Վոյզն ինչ մտադրութիւն առ այս

բաւական է 'ի ցուցանել թէ զիւրիւր
 և յորչափ պահպանու թիւն առողջու-
 թեան մարդոյ կախի 'ի պատշաճ ըզ-
 դուշու թեանէ կարգադրեալ կերակ-
 րոց: Ս 'ի մտադրու թիւն պատշաճ և
 զգուշաւոր կարգադրու թեան կերա-
 կրոց ոչ միայն հարկաւոր է վասն ա-
 ռողջութեան, այլ և է զօրաւոր մի-
 ջոց բժշկութեան ամենայն ցաւոց, զի
 իւրաքանչիւր բժշկի գլխաւոր ուշա-
 դրութիւն հիւանդութե իմիք պա-
 հանջէ ժուժկալութիւն կերակրոյ, ի-
 րաւի է, զի ներգործութիւն սորա չէ
 այնպէս փութանակի որպէս դեղոցն,
 սակայն առաւել տեւողական է այս
 և կազդուրիչ, և ոչ այնպէս անհաճոյ
 և տաղտկալի հիւանդին կամ վտան-
 գաւոր, որպէս դեղն:

'Իստու մն մեր ոչ է ճշդիւ քննել
 զբնութիւն կամ զյատկութիւն զա-
 նազան կերակրոց, զորս մարդիկ 'ի
 կիր առնուեն, և ոչ եւս 'ի ցուցանել
 զնոցին ներգործութիւն 'ի վերայ զա-
 նազան կազմուածոյ մարդկային մար-
 մնոյ, այլ միայն է 'ի նշանակել զվնա-
 սակարսխալանսինչ, յորս մարդիկ դիւ-
 րապատրաստ են անկանիլ միշտ: Ա-
 այս սխալանք է երկու ինչ, այսինքն՝
 քանակութիւն և որակութիւն կե-
 րակրոց, և ցուցանել անդէն զներ-
 գործութիւն նոցին 'ի վերայ առող-
 ջութեան:

Արդարեւ չէ դիւրին հաստատել
 զճիշտ քանակութիւն կերակրոյ պատ-
 շաճ ամենայն հասակի, սեռի և կազ-
 մուածոյ, սակայն զգուշաւոր խնամ-
 քստ ամենայնի հարկաւոր է, և ու-
 նել միշտ 'ի մտի զգեղեցիկ զայն կանոն
 իմաստասիրաց, որ ասի. «Յամենայնի
 հարկ է 'ի բաց կալ 'ի վերջին ծայրէ
 և կաշնուլ միշտ զմիջինն, այսինքն՝ ըզ-
 չափաւորն: 77

Մարդիկ ոչ երբէք դիտեն 'ի չա-

փել կամ 'ի կշռել զկերակուր իւր-
 եանց. քանզի բնութիւնն իսկ ուսու-
 ցանէ ամենայն մարդոյ զժամանակ
 քաղցու և ծարաւի և զչափ յազեցման,
 միայն այս սահմանեալ կարգ բնու-
 թեան թիւրի 'ի շուայտոզն, որք ոչ
 զժամանակ և ոչ զչափ որոշեն երբէք:

Թէ և գլխաւոր և գերագոյն կա-
 նոն քանակութեան կերակրոց է չա-
 փաւորութիւնն, որոյ չափազանցն
 մեծ վնաս գործէ, սակայն որակու-
 թեան կերակրոց արժան է երկարաձիգ
 խորհրդածութեան. քանզի բազում
 են տարբեր եղանակք, որոց հնար է
 վնասակար առնել զկերակուրն:

Այնակ տարւոյ, որոյ երբեմն
 գորով սաստիկ ցուրտ կամ ջերմ, ա-
 պականէ զբերս արմտեաց կամ տըն-
 կոց և ամենայն ինչ առնէ վնասակար,
 այլ այս է գործ 'Ախատեսչին, զոր սի-
 րով և գոհութեամբ տանել պար-
 տիմք, սակայն յորչափ և յորպիսի պատ-
 ժոյ արժանի են անգութ և անխիղճ
 տուր և առողք ուտելեաց և ըմպել-
 եաց, որք վասն շահախնդրութեան
 անձին պէսպէս բաղադրութեամբ
 ապականեն զվաճառ իւրեանց յորոց
 եթէ ոչ զգուշասցին, մեծ վնասք
 պատճառին առողջութեան հասարա-
 կաց:

Սեղէն կամ բանջարեղէն կերա-
 կուրք յորժամ պահեսցին ընդ երկար,
 չէ արժան ուտել, զի վնասակար է
 յոյժ: Ամենայն անամնային գոյտոցու-
 թիւն և արմտիք դալարեաց ունին
 յատկութիւն նեխելոյ. եւ յորժամ
 պահեսցին ընդ երկար, նեխեսցին ան-
 շուշտ զորս ուտելն մեծ վնաս պատ-
 ճառէ առողջութեան:

Սիս ցաւագար կամ սառակեալ
 անասնոց բնաւ մի ուտիցի, և ս եթէ
 դիպուածով իմն սպանեալ իցէ, որոյ
 արիւնն մեռեալ գոլով 'ի մէջ մտոյն

յոյժ փնասէ առողջութեան :

Անասունք կամ ընտանի բազբ, սագբ, հաւք, խողբ, և այլն, որք փակեալ մնան 'ի տան առանց չըլելոյ 'ի բաց օդի, միս այսպիսեաց է դըժուարամարս և ոչ այնպէս սննդարար որպէս կարծի 'ի բազմաց : Այլեալ և ծխեալ միսք, որպիսի են կովու, ոչ խարի, խողի, ձկան, հաւու, և այլն, սրահեալ յաւուրս ինչ կամ յամիսս, բազում անգամ պատճառեն բոր, քոս և այլ ախտ մորթոյ, որոյ դեղ է նախ 'ի բաց կալ յայնցանէ . և երկրորդ 'ի կիր առնուլ կաթն և բանջար և մարմնական կրթութիւն 'ի բաց օդի :

Մսնդարար կերակրոց պարտ է լինիլ ոչ կարի հիւթալից, և ոչ կարի չոր և ցամաք : Օ ի հիւթալից կերակուրն թուլացուցանէ զամրակազմութիւնն և տկարացուցանէ զմարմինն : Արպէս փորձիւ տեսանեմք զի իգականք՝ որք կեան յաւէտ թէյիւ և այլ լոյծ կերակրովք, առհասարակ նուազ են և անկարող 'ի մարսել զսերտկամ զպնդանիւթ կերակուրս, յորմէ և յառաջ գան ախար արգանդի և այլ փնասակար հետեւանք : Այլ չոր և ցամաք կերակուրն խստացուցանէ զթանձրագոյն մասն մարմնոյ և մածուցանէ զհիւթսրն . ուստի և պատճառի տապողա՛կան ջերմն, բոր, քոս և այլ փնասակար ախտք :

Բազումք արդէն խօսեցեալ են ըզփնասակար ներգործութենէ թէյի, և այն ոչ միայն զվատթար տեսակէ նորա, այլ և զանխոհեմ կիրառութենէ : Օ ի բազումք սովորեալ են ըմպել զայս հեղուկ 'ի ժամ առաւօտութեալ քանչիւր աւուր նախ քան զճաշելն իւրեանց, որով խոպառ բառնի քաղց նոցա, որ և անկասկած վընասէ առողջութեան : Այլ թէ թէյն իցէ յընտիր տեսակէ և առցի չա-

փաւոր քանակութեամբ, ոչ կարի թանձր և ոչ կարի ջերմ, և ոչ դատարկ ստամբսիւ, ոչ ունիցի այնչափ փնասակար ներգործութիւն, այլ և գուցէ երբեմն ունիցի օգուտ ինչ :

Յորմէ հետէ հնարեցաւ արուեստակեալ խահարարութիւնն, ընդ նըմին և գոյացան բազում փնասակար հիւանդութիւնք և պէսպէս ախտք և ցաւք. քանզի ամենայն ինչ, որ պէսպէս բազադրութեամբ յիւր խակահան բնութենէ փոխի առ այլ, անհընար է այնր լինիլ անփնաս. զոր օրինակ, 'ի հիւթոց արմատոց, բուսոց և տընկոց և ստղոց յորժամ կազմեն բմպելի ինչ, զինորդ միանգամայն փոխին զօրութիւնք և ներգործութիւնք նոցա : Այսպէս իմա և զբազադրեալ կերակրոց, որք պատրաստին զանազան բազադրութեամբ, առնելով զկծուկամ բարկ համեմս, զզօրաւոր արգանակ, զհամեմեալ կերակուրս, աղեջուրս, թթուեղէնս և այլն, որք են կարի փնաս առողջութեան, մանաւանդ յաճախ ուտողաց, Վանզի այսօրիկ են գրգռիչ սրեան, յորդութեան մաղձի և մաղասի և զարթուցիչ ախորժակի անոր քան զչափ յագեցման, որք յաւէտ փնասեն : Այ սակաւ զգուշաւոր մտադրութի մեր սրահանջէ և հեղուկ մասն սննդեան մերոյ, որ է ջուրն :

Չուրն, որ է զլսաւորագոյնն 'ի հեղուկաց և կենսարար, կացուցանէ զմեծ մասն զօրաւոր սննդեան մերոյ, 'ի յիջուցանել զճարաւ և 'ի կիր առնուլն յամենայն պիտոյս կենաց մերոց, պարտ է լինիլ ընտիր, յոյժ մաքուր և ազատ 'ի խտուռուածոյ օտար նիւթոց, զի յորժամ խառնեալ է ընդ այն օտար նիւթ ինչ, ծանրանայ և նշմարի 'ի գունոյ, 'ի հոտոյ, 'ի համոյ և 'ի ջերմոյ, կամ 'ի թոյլ զբայուն որպիսութենէ, վասնորոյ չէ սրտաւ երբէք անդգուշ զը-

տանել յընտրել զըսր ըմպելեաց կամ
ի պէտս կերակրոց, զի իցէ այն թեթեւ
և առանց իրիք յատկացեալ գունոյ,
համոյ և հոտոյ, որ կարի վնասակար
է առողջութեան :

Ի որքոքիչ ըմպելիք, սյսինքն՝ օղի,
զօրաւոր գինի և այլ արուեստակեալ
ջերմաբնոյթ ըմպելիք, թէ և ՚ի զանա-
զան ժամանակս և ՚ի զանազան տեղիս
բանիւ և դրով դատապարտեցան իբ-
րեւ վնասակարք, սակայն տակաւին
տեւեն, և գրեթէ հասարակաց ըմ-
պելիք են յամենայն ուրեք, որ և օր
աւուր առաւելու գործածութիւն
նոցին և յոչ ումեքէ խնայի երբէք,
յորժամ կարէ տոկալ ծանր ծախուցն,
վասն որոյ ՚ի զուր է միանգամայն և
վասն իմ, եթէ կամեցայց աշխատ լի-
նիլ և խօսիլ ինչ ընդդիմութեամբ,
միայն գուն գործեցոյ օգնել ամենե-
ցուն ընտրողութեամբ այնպիսի ըմ-
պելեաց, որ ոչ տացէ ումեք զիրաւ-
ուենս տրտունջ բառնալոյ զմէնջ :

Ոչ չափաւոր կիրառութիւն մա-
քուր և մեղմ ըմպելեաց վնասէ մար-
դոյ, այլ անչափն, և որ ինչ է ՚ի վատ-
թար և յապականեալ տեսակէ :

Ի որքոքիչ ըմպելիք չեն մշտական ճա-
շակելիք, զի վնասեն ստամոքսի, անկարող
առնեն և թուլացուցանեն զմարմինն :

Ի ազումք կարծեն թէ՛ ծանր աշխա-
տասէրք առանց ՚ի կիր առնելոյ զզօրա-
ւոր ըմպելիս՝ չկարեն տոկալ երկար .
բայց սխալ է այս կարծիք յոյժ, զի փոր-
ձիւ տեսանի ՚ի զանազան ազգս, որք
բնաւ ոչ ճաշակեն օղի, ոչ գգինի և ոչ
զայլ ինչ զօրաւոր ըմպելի, առաւել
տանին ծանր վաստակոց և երկար են
ի կեանս քան զայնոսիկ որք սովոր են
ի կիր առնուլ զայն յամենայն աւուր
եթէ նախ և եթէ զկնի վաստակոց
իւրեանց :

Օ զրաւոր ըմպելիք գուցէ տան

մարդոյ գործել առաւել քան զկարո-
ղութիւն իւր, բայց ոչ է այս տեսու-
ղական, զի փութով կորուսանէ նա
զկարողութիւն իւր, և կանուխ հա-
սանէ լքեալ հասակ ծերութեան :

Հացն է կարի հարկաւոր մասն սը-
ննդարար կերակրոյ մերոյ, զոր գրե-
թէ աշխարհ ամենայն ՚ի կիր առնուն
և անթիւ մարդիկ առանց հացի չք
կարեն ապրիլ, վասն որոյ հարկ է
զամենայն զգուշաւոր մտադրութիւն
մեր նուիրել առ այս քաջառօղջ և
սննդարար կերակուր, և ուշի ուշով
դիտել, զի իցէ այն անարատ և ՚ի
մաքուր և յանփութ ցորենոյ պատշա-
ճապէս պատրաստեալ, և ազատ յա-
մենայն խառնուածոց, քանզի բազում
հացարարք առ ՚ի շահ անձին դիտեն
միայն հաճել զաչս հասարակաց քան
փոյթ տանիլ առողջութեան նոցա .
վասն որոյ ոչ խղճան երբէք խառնել
ի նոյն զայլ վնասակար բազադրու-
թիւնս, որ զառողջութիւն հացին
փոխէ առ անառողջութիւն, ուստի
ճշտագոյն ընտրութիւն հացի այն է
զի ՚ի մաքուր և ՚ի նոր ցորենոյ պատ-
րաստեալ լինի, ոչ կարի հաստ և ոչ
կարի նուրբ, և բարւոք եփեալ և
թրեալ :

Են և ՚ի մէջ բուսեղինաց և պրո-
դոց բազում տեսակք, զորս մարդիկ
ի տեղիս տեղիս ՚ի կիր առնուն եփեալ
և անեփ փոխանակ հացի, յորոց ոմանք
են յոյժ սննդարարք և դիւրամարսք,
որք են որիզ, գետնախնձոր, ստեպղին,
ճակնդեղ, բողիկ, կաղամբ, չողգամ և
այլն : Են և ոմանք սննդարարք, այլ քա-
մտ և դժուարամարսք, որք են, ոլուն,
սխաւուն, բակլայ, սուղ, և այլն :

(Շարունակութիւնն) :



Ժ.ԱՄԸՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ի 272 Յունիսի սարկաւազութեան
աստիճան ընկալան Կարապետ Յ.
Սարկաւեան Արապկերցի և Կարա-
պետ Տ. Մինասեան Պարտիզակչի .

Սարկաւազ	Սարգիս	Պրոլսացի	Յովհաննէս	վարդապետ.
"	"	Յակոբ	Կ.	Պօլսեցի
"	"	Գրիգոր	Տէրէվանքցի	(Ի Կեսարիոյ)
"	"	Սկրտիչ	Տիգրանակերտցի	
"	"	Սահակ	Կ.	Պօլսեցի
"	"	Պետրոս	Ղուրտպէլէնկցի	
"	"	Կարապետ	Արապկերցի	
Տէր	Սիւրբար	քահանայ	Սոկացի	
			Յովհաննէս	վարդապետ.
			Գաբրիէլ	" "
			Գանիէլ	" "
			Սաղաքիա	" "
			Սարգիս	" "
			Ամբակում	" "
			Սամբէ	" "
			Սիւրբար	" "

Ս. Աթոռս իւր վարդապետ միա-
բանից թիւը աւելցնելով կը յուսայ
ճշմտայն ամեն աթոռապատկան պաշ-
տօնները անթերի և կանոնաւոր կեր-
պիւ կատարել, այլ և ձեռնհասու-
թիւն և միջոց ունենալ իւր մի ամե-
նախեմ և նուիրական պարտքը կա-
տարելու, որ է ՚ի պահանջիլ հարկին
եկեղեցական պաշտօնեաներ տալ Ազգ.
Վարչութեանը, և ժամանակ առ ժա-
մանակ քարոզիչներ ղրկել Հայաստանի
գաւառներն և այլ հայաբնակ քաղաք-
ներն ու աւանները, և այսպէս հայ-
ազգի ժողովուրդը միսիթարել հոգե-
ւոր միսիթարութեամբ: Սոյն նուիր-
ական պարտուց կատարումը խիստ
զգալի է Ս. Աթոռոյս Ամեն. Աս-
խագահին և համօրէն առաքելական
Ախսին համար, ուստի և քաջայոյս
ենք, որ ամենակարող աջակցութեամբ
Բարձրեղոյն պիտի յաջողուի պսակել
այս սուրբ իղձերը և փափաքները ՚ի
հոգեւոր շինութիւն Ազգին և ՚ի պայ-
ծառութիւն Հայաստանեայցս առա-
քելական Ս. Ակեղեցւոյ:

Իսկ ՚ի 4^ն ներկայ ամսոյս, ՚ի տօնի
Պայծառակերպութեան Փրկչին մերոյ
Յիսուսի Բրիտանոսի, կոչեցան յաստի-
ճան քահանայութեան և ՚ի վարդա-
պետութիւն եօթն սարկաւազուներ
և մի քահանայ, որոց անուանքն եւս
փոփոխեցան և են այսոքիկ.

— Լատինք, ամսոյս 13^{ին}, գիշեր-
րային նոր հրաշք մի գործեցին Բէթ-
ղէհեմի մէջ: Բառասնից այրը, որ,
լատ վաւերական հրովարտակաց, ե-
րեք ազգաց (Հայոց, Յունաց և Լա-
տինաց) սեպհականութիւն է և հակա-
ռակութե պատճառաւ պարիսպը կի-
սաքանդ մնացած էր, գիշերը գաղտ-
նածածուկ ջանիւք նորոգեցին Լա-
տինք և երկաթեայ դուռն կախելով
զարմացուցին բոլոր Արոլսազէմը, փու-
խանակ ներկային՝ 1865 թուականը ար-
ձանագրելով պորսպի վրայ, որպէս թէ
վաղուց շինած են: Այս հրաշքը կա-
տարեցին այն գիշերը, երբ արդէն
բացասութիւն եղած էր իրենց, որ
բնաւ իրաւունք չունին Ս. Յակովբայ
տաճարին մէջ պատարագելու: Սակայն
անտարակոյս ենք որ, Տեղւոյս Վսեմ.
Կուսակալի և երկուց միաբանութեց
կողմէն ձեռք առնուած միջոցներով,
չուտով պիտի կործանի գիշերային հը-
րաշալիքը եւ ցերեկեան լուսով նոր
պարիսպ պիտի շինուի, իբրեւ սեպ-
հականութիւն երեք ազգաց:

Ց Ա Ն Կ

Յ Ո Ւ Լ Ի Ս .

Ղառ ՚ի հանդիսի պարգեւաբաշխութեան .	145
Սուրբ Տեղեաց խնդիրը .	153
Կարգադրութիւն առողջութեան .	162
Դամանակագրականք .	168

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Բ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածայ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մեծիտիյէ, հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Չատ տեսրակ առնել Եւզղը, պէտք է ամեն մէկ տետրին շորս դահեկան վճարել :